



CONTROL CHAMBER
OF THE REPUBLIC OF ARMENIA
CHAIRMAN

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ
ՆԱԽԱԳԱՀ

КОНТРОЛЬНАЯ ПАЛАТА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ПРЕДСЕДАТЕЛЬ

¹ *ajmle-30*

«31» *Տպպի* 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ


Հարգելի պարոն Կարապետյան

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի և 20-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, Ձեզ եմ տրամադրում Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի խորհրդի կողմից 2017 թվականի մարտի 30-ին հաստատված՝ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2016 թվականի տարեկան հաշվետվությունը:

Հարգանքով

Կ. Յուրյան

Լ. ՅՈՒՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2017 թ. Տարբեր 30-ի թիվ 6/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի
10-րդ մասի գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2016
թվականի տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Լ. ՅՈՒՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	3
2. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	4
2.1 ՀՀ կրթության և գիտության նախարարություն	4
2.2 ՀՀ կրթության և գիտության նախարարության «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ.....	9
2.3 ՀՀ կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	11
2.4 ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն.....	13
2.5 ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով	14
2.6 ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե.....	15
2.7 ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե.....	17
2.8 Օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրերի միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողություն	19
2.8.1. «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկում իրականացված վերահսկողություն	19
2.8.2 «Կրթական ծրագրերի կենտրոն» պետական հիմնարկում իրականացված վերահսկողություն.....	20
2.8.3. ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի գրասենյակ» պետական հիմնարկում իրականացված վերահսկողություն	25
2.8.4 «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկում իրականացված վերահսկողություն.....	26
2.9 Սոցիալական ծառայության տարածքային գործակալություններ.....	29
2.10 Տարեցներին շուրջօրյա խնամքի ծառայություններ մատուցող կազմակերպություններ.....	31
2.11 Սոցիալական փաթեթի շահառուներին պետական բյուջեից գումարների հատկացում և օգտագործում.....	34
2.12 «Ձեռնարկությունների Ինկուբատոր» հիմնադրամ.....	38
2.13 ՀՀ սփյուռքի նախարարություն.....	44
2.14 ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնք	45
2.15 ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնք.....	48
2.16 ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնք.....	50
2.17 ՀՀ Լոռու մարզի Սպիտակի համայնք...51	
2.18 ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնք....54	
3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐ.....	56

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հաշվետու տարում Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի (այսուհետ՝ Վերահսկիչ պալատ) գործունեությունն իրականացվել է **Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին**, ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատված Վերահսկիչ պալատի 2016 թվականի գործունեության տարեկան ծրագրին (այսուհետ՝ Տարեկան ծրագիր) համապատասխան:

Վերահսկողության արդյունքներն ամփոփվել են Վերահսկիչ պալատի թվով 23 ընթացիկ հաշվետվություններում (որից 9-ը՝ արտածրագրային վերահսկողության արդյունքներով):

Բոլոր հաշվետվությունները, «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան, Վերահսկիչ պալատի խորհրդի կողմից հաստատվելուց հետո՝ տասն օրվա ընթացքում, ներկայացվել են ՀՀ Ազգային ժողով և դրանց մասին տեղեկացրել ՀՀ Նախագահին և ՀՀ կառավարությանը: Հաստատված 23 հաշվետվություններից երկուսում առկա է պետական գաղտնիք պարունակող տեղեկատվություն: Հետևաբար, Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am) տեղադրված են բոլոր հաշվետվությունները, բացառությամբ՝ «ՀՀ կառավարությանն առընթեր «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունում վերահսկողություն իրականացնելու մասին» և «ՀՀ պաշտպանության նախարարությունում վերահսկողություն իրականացնելու մասին» ընթացիկ հաշվետվությունների, քանի որ դրանք պարունակում են գաղտնի տեղեկատվություն, որոնց հետ կարելի է ծանոթանալ օրենքով սահմանված կարգով:

Հաշվետու տարում Վերահսկիչ պալատի կողմից ընթացիկ հաշվետվություններում վերահսկողության խնդրո առարկայի վերաբերյալ ներկայացվել է 120 առաջարկություն:

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի պահանջով՝

- վերահսկվող օբյեկտների ղեկավարները Վերահսկիչ պալատին տրամադրել են տեղեկատվություն՝ հայտնաբերված և ընթացիկ հաշվետվություններում ամրագրված խախտումները վերացնելու մասին,
- տվյալ տեղեկատվությունը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, վերահսկիչ պալատն այն ամբողջությամբ տրամադրել է Ազգային ժողովին:

Վերահսկիչ պալատի կողմից 2016 թվականին իրականացված վերահսկողությունների արդյունքում կազմված ընթացիկ հաշվետվություններից 3-ի մասով հարուցվել են քրեական գործեր:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը կազմելիս Վերահսկիչ պալատն առաջնորդվել է «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքով և **Բարձրագույն վերահսկիչ մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI)** սկզբունքներով:

2. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2.1 ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Վերահսկողությունն իրականացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից իրականացվող հետևյալ ուղղությունների ծրագրերի նկատմամբ.

- «Բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումներ» ծրագիր
- «Կրթության բովանդակային և մեթոդական սպասարկում և հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում» ծրագիր
- «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (այսուհետ՝ ՄԿՈՒ) բարեփոխումներ» ծրագիր:

Վերահսկողության օբյեկտ են հանդիսացել ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ (այսուհետ՝ ՓԲԸ), «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամը:

Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման և վերլուծության ձևերով, կիրառվել են վերահսկողության՝ ֆինանսական, արդյունավետության (կատարողական) և համապատասխանության տեսակները:

Վերահսկողության արդյունքներով արված հիմնական եզրահանգումները

«Բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումներ» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) մասով

1. Նախարարությունը շրջանցելով ՀՀ կառավարության 29.04.2010թ. թիվ 566-Ն որոշմամբ հաստատված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագրի օրինակելի ձևը, ՓԲԸ-ի հետ կնքել է հանձնարարության պայմանագիր, որի հետևանքով վերոնշյալ ծրագրով նախատեսված միջոցներից 58,382.7 հազ.դրամի աշխատանքներն ու ծառայություններն իրականացվել են առանց «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգերի ապահովման:
2. Պայմանագրի շրջանակներում 2015 թվականին կատարված 4,445.4 հազ.դրամի ծախսը առնչություն չունի ծրագրի նպատակի հետ:
3. Ձեռքբերված աշխատանքների և ծառայությունների համար հանձնման-ընդունման արձանագրություններ հիմնականում չեն կազմվել, ինչպես նաև առանձին դեպքում ծախսերը կատարվել են առանց պայմանագրի կնքման:
4. ՓԲԸ-ի կողմից նախարարություն ներկայացված հաշվետվություններով փաստացի ծախսերը չեն համապատասխանել իրականությանը:
5. Նախարարության կողմից հաշվետվությունն ընդունվել և ֆինանսավորումն իրականացվել է առանց պայմանագրով նախատեսված հաշվետվության հետ պահանջվող ծախսը հիմնավորող փաստաթղթերի առկայության:

6. Բյուջետային հայտով նախատեսվել և իրականացվել են գործողություններ, որոնք չեն ներառվել նախահաշվում, իսկ որոշ դեպքերում կատարվել են ծախսեր, որոնք նախատեսված չեն եղել ինչպես բյուջետային հայտով, այնպես էլ նախահաշվով:

7. ՀՀ կառավարության 10.09.2009թ. «Հայաստանի Հանրապետություն ժամանող պաշտոնական պատվիրակությունների ընդունելության հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից կատարվող ծախսերի մասին» թիվ 1036-Ն որոշմամբ պատվիրակության անդամի սննդի հետ կապված օրական ծախսը սահմանված է մինչև 8000 դրամ, սուրճի ընդմիջման ծախսը՝ մինչև 1500 դրամ: Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական գազաթափողովի ու Բոլոնիայի քաղաքականության 4-րդ ֆորումի մասնակիցների հյուրասիրության ծախսը որոշմամբ սահմանված առավելագույն չափերով հաշվարկելու արդյունքում կկազմեր նախատեսված և վճարված գումարից 6,563.8 հազ. դրամով պակաս:

«Կրթության բովանդակային և մեթոդական սպասարկում ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) մասով

1. Ծրագրով հստակեցված չեն պայմանագրի հավելվածով նախատեսված գործողությունների արժեքային և քանակական ցուցանիշները:

2. ՀՀ կառավարության 18.12.2014թ. թիվ 1515 որոշմամբ ծրագրով սահմանված վերապատրաստվող ուսուցիչների թիվը՝ ոչ ֆինանսական (քանակական) ցուցանիշը չի ապահովվել: 2015 թվականին փաստացի վերապատրաստվել է 8077 մանկավարժական մասնագետ՝ սահմանված 10000-ի փոխարեն):

3. Ծրագրի բյուջետային հայտով առանձին ծախսային հոդվածներով նախատեսվել են անհրաժեշտ միջոցներից ավելի միջոցներ, որոնք բաշխվել են նախահաշվի այլ հոդվածների վրա և օգտագործվել՝

- բջջային հեռախոսակապի համար ծախս չի նախատեսվել, փաստացի կատարվել է 6,783.3 հազ. դրամի ծախս:

- կապիտալ ծախսերի համար միջոցներ չեն նախատեսվել, սակայն կատարվել է 22,515.3 հազ.դրամի ծախս:

ՓԲԸ-ն իրավասու չէր կատարելու ինչպես կապիտալ, այնպես էլ բջջային հեռախոսակապի ծախս:

4. Բյուջետային հայտով միջոցներն առանց հիմնավորման և հաշվարկների նախատեսելու արդյունքում տարիների ընթացքում պետական բյուջեից տարբեր ծրագրերով հատկացված միջոցներից առաջացել են մնացորդներ, որը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 202,137.2 հազ դրամ (ավելին առկա են նաև ավանդադրված գումարներ):

5. ՓԲԸ-ն նախարարություն է ներկայացրել եռամսյակային հաշվետվություններ, սակայն ֆինանսավորումն իրականացվել է ամսական կտրվածքով, որը հանգեցրել է հաշվետվությամբ (ծև Հ-2) ներկայացված տվյալների անհամապատասխանության:

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումներ» ծրագրի (այսուհետ՝ ՄԿՈՒ ծրագիր) մասով

1. ՄԿՈՒ ծրագրի կատարման նպատակով տրամադրվող պետական աջակցության պայմանագրերը կազմվել են ՀՀ կառավարության 29.04.2010թ. թիվ 566-Ն որոշմամբ հաստատված պայմանագրի օրինակելի ձևի համեմատ որոշ բացթողումներով:

2. Չի ապահովվել ՀՀ կառավարության 18.12.2014թ. թիվ 1515-Ն և 24.12.2015թ. թիվ 1555-Ն որոշումների թիվ 11 հավելվածով (ՀՀ 2015 թվականի և 2016 թվականի պետական բյուջեի ոչ ֆինանսական ցուցանիշներ) ծրագրի իրականացման նպատակով 2015 թվականին սահմանված «չափորոշիչների և գնահատման չափանիշների մշակում» և «ներդրված մոդուլային ծրագրեր»-ի քանակը, պայմանագրով կատարվել է սահմանվածից յուրաքանչյուրից 7 հատով պակաս և 2016 թվականին սահմանված մշակման ենթակա «կրթական պետական մասնագիտական չափորոշիչների և մոդուլային ծրագրերի» քանակը, պայմանագրով նախատեսվել է յուրաքանչյուրից 5 հատով պակաս: 2015 թվականի չափորոշիչների և մոդուլային ծրագրերի մշակման համար պետական բյուջեով ավելի հատկացված գումարը կազմում է 24,038.0 հազ. դրամ: 2016 թվականի ֆինանսավորումը կարող է իրականացվել պայմանագրով նախատեսված մշակման ենթակա չափորոշիչների և մոդուլային ծրագրերի թվին համապատասխան, այսինքն՝ պետական բյուջեով (ծրագրով) նախատեսված միջոցներից 17,170.0 հազ. դրամով պակաս:

3. ՄԿՈՒ ծրագրի 2015-2016 թվականների բյուջետային հայտի և հաստատված նախահաշվի միջև առկա են անհամապատասխանություններ: Բյուջետային հայտով առանձին ծախսային հոդվածներով նախատեսվել են անհրաժեշտ ծախսերից ավելի միջոցներ: Ծախսերը նախատեսվել են առանց հիմնավորման և հաշվարկների: «Մասնագիտական կրթության և ուսուցման ազգային կենտրոն» հիմնարկը իրեն ամրացված շենք, շինություններ, տրանսպորտային միջոց չունի, որևէ ծառայության բաժանորդ չի հանդիսանում, գործում է ՓԲԸ-ին պատկանող շենքում՝ զբաղեցնում է 4 սենյակ և հանդիսանում է ՓԲԸ-ի կառուցվածքային ստորաբաժանում, սակայն բյուջետային հայտով նախատեսվել է էլեկտրաէներգիայի, ջեռուցման, կապի ծառայության, տրանսպորտի պահպանման, կոմունալ և այլ ծախսեր (2015 թվականին նախատեսվել է 9,111.2 հազ. դրամ, 2016 թվականին՝ 9,562.3 հազ. դրամ):

Հաշվետվությամբ ցույց տրված փաստացի ծախսը չի համապատասխանում իրականությանը: 2015 թվականի հաշվետվությամբ ֆինանսավորումը և փաստացի ծախսը ցույց է տրվել 162,963.6 հազ. դրամ, այն դեպքում, երբ փաստացի ծախսը կազմել է 129,600.9 հազ. դրամ, կամ փաստացի ծախսը ցույց է տրվել 33,362.7 հազ. դրամով ավելի: 2016 թվականի ՄԿՈՒ ծրագրով 2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կիսամյակի հաշվետվությամբ ֆինանսավորումը ցույց է տրվել 69,903.5 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 43,034.4 հազ. դրամ, այն դեպքում, երբ փաստացի ծախսը կազմել է 30,784.1 հազ. դրամ կամ 12,250.3 հազ. դրամով փաստացի ծախսն ավելի է ցույց տրվել:

4. «ՄԿՈՒ բարեփոխումների արդյունքների գնահատում» խորհրդատվական ծառայությունն (3,060.0 հազ. դրամ) իրականացվել է անհատ խորհրդատուների կողմից՝

առանց «Գնումների մասին» ՀՀ օրենքով խորհրդատվական ծառայության գնման համապատասխան ընթացակարգի ապահովման:

5. ՄԿՈՒ ծրագրով կատարված ծախսերի առանձնացված հաշվառում չի վարվում (մասնավորապես «Մասնագիտական կրթության և ուսուցման ազգային կենտրոն» հիմնարկի ապարատի պահպանման ծախսերի մասով):

Վերահսկողության արդյունքներով ներկայացվել են հետևյալ առաջարկությունները

«Բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումներ» ծրագրի մասով

ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝

1. Ծրագիրն իրականացնել ՀՀ կառավարության 29.04.2010թ. թիվ 566-Ն որոշմամբ հաստատված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագրի օրինակելի ձևին համապատասխան կնքված պայմանագրի շրջանակներում (բացառելով «Հանձնարարության պայմանագրի» կնքումը):
2. Բյուջետային հայտը կազմել համապատասխան հիմնավորումներով և հաշվարկներով:
3. Նախատեսված միջոցներն ուղղել բացառապես ծրագրի նպատակների իրականացմանը:

«Կրթության բովանդակային և մեթոդական սպասարկում ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում» ծրագրի մասով

ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝

1. Բյուջետային միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործման նպատակով պետական բյուջեով ծրագրի միջոցները նախատեսել սուբսիդիայի ձևով, որը կապահովի կատարված ծախսերին համապատասխան միջոցների հատկացումը:
2. Հաշվի առնելով այն իրողությունը, որ տարիներ շարունակ ՓԲԸ-ն հիմնականում իրականացրել է նույն ծրագրերը և յուրաքանչյուր տարի հատկացված դրամաշնորհային միջոցներից առաջացել են մնացորդներ (2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 202,137.2 հազ դրամ), ինչպես նաև առկա են ավանդադրված գումարներ, բյուջետային միջոցները խնայելու նպատակով դրանք 2017 թվականին կարող են ուղղվել ՓԲԸ-ի կողմից իրականացվող «Կրթության բովանդակային և մեթոդական սպասարկում ու հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում» ծրագրի ֆինանսավորմանը:
3. Հաշվի առնելով այն, որ ծրագրերով ֆինանսավորումն իրականացվում է ամսական կտրվածքով ծրագրերի իրականացման նպատակով կնքվող պայմանագրերում նախատեսել ծախսերի վերաբերյալ հաշվետվությունների (այդ թվում բովանդակային) ամենամսյա ներկայացման պահանջ և հստակ ժամկետ, որով կապահովվի ծախսերի նկատմամբ վերահսկելիությունը, ինչպես նաև դրանց համապատասխան ֆինանսավորումը:

4. Ելնելով ՓԲԸ-ի կանոնադրությամբ սահմանված գործունեության նպատակից (որը շահույթ ստանալն է), գրականության փորձաքննությունն իրականացնել վճարովի հիմունքներով, ՀՀ ԿԳ նախարարի 14.12.2012թ.-ի թիվ 1144-Ն հրամանով հաստատված գործող կարգում կատարելով ՀՀ օրենսդրությանը չհակասող համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

«Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին՝

1. Ծրագրերի բյուջետային հայտերով նախատեսել ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ, հիմնավորված ֆինանսական միջոցներ:
2. Ապահովել պայմանագրով նախատեսված ՓԲԸ-ի պարտավորությունների պատշաճ կատարումը:
3. Ծրագրի նախահաշիվը կազմել բյուջետային հայտի հոդվածներին և դրանցով նախատեսված չափերին համապատասխան:

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումներ» ծրագրի մասով

ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝

1. Նախարարության և ՓԲԸ-ի միջև պայմանագրերը կնքել ՀՀ կառավարության 29.04.2010թ. թիվ 566-Ն որոշմամբ՝ «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրի» սահմանված օրինակելի ձևի դրույթներին համապատասխան:
2. ՄԿՈՒ ծրագրի իրականացման նպատակով ՓԲԸ-ի հետ կնքվող պայմանագրերում գործողությունների ոչ ֆինանսական ցուցանիշները նախատեսել ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով սահմանված ոչ ֆինանսական ցուցանիշներին (քանակներին) համապատասխան:
3. 2015 թվականին չափորոշիչների և մոդուլային ծրագրերի մշակման համար ծրագրով ավելի հատկացված 24,038.0 հազ. դրամը ենթակա է փոխանցման պետական բյուջե:

«Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին՝

1. Նախարարություն ներկայացվող հաշվետվությամբ ներկայացնել փաստաթղթերով հիմնավորված, արժանահավատ տեղեկատվություն:
2. ՄԿՈՒ ծրագրով կատարված ծախսերի հաշվառումն իրականացնել այլ ծրագրերից առանձնացված:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան հաշվետվությունում, որին կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.2 ՀՀ կրթության և գիտության նախարարության «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ

Վերահսկողությունն իրականացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից պետական բյուջեից հատկացված միջոցների, ինչպես նաև արտաբյուջետային միջոցների օգտագործման, պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ:

Վերահսկողության օբյեկտ է հանդիսացել «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Համալսարանը):

Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևով, ինչպես նաև կիրառվել են ֆինանսական, արդյունավետության (կատարողական) և համապատասխանության տեսակները: Կիրառվել է ընտրանքային մեթոդի ոչ վիճակագրական եղանակ: Վերլուծության փուլում ամփոփվել և վերլուծվել են դիտարկման և ստուգման արդյունքում ստացված տվյալները:

Վերահսկողության արդյունքներով արված հիմնական եզրահանգումները

1. 2014-2015 թվականների ուսումնական տարվա ընթացքում ուսանողական նպաստի ձևով ուսման վարձը մասնակի չի փոխհատուցվել՝ 46,245.8 հազ.դրամ: Սույն խախտումը առաջացել է 2014 թվականի մայիսի 19-ին ընդունված երկու՝ «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում կատարված փոփոխությունների արդյունքում առաջացած հակասության պատճառով: «Կրթության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունը ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից, իսկ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունը ուժի մեջ է մտնում 2014 թվականի սեպտեմբերի 1-ից: 2014-2015 թվականների ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կարիքավոր ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցումը իրականացվել է որոշակի թերություններով, ինչն էլ երկրորդ կիսամյակում ամբողջությամբ շտկվել է:

2. Ուսումնասիրվել է 2014-2015 թվականների և 2015-2016 թվականների ուսումնական տարում Համալսարանի կողմից իրականացվող ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցմամբ՝ շուրջ 200 սոցիալական խումբ ունեցող ուսանողների դիմումները: Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է թվով 10 խախտում:

3. Խախտվել է ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն որոշման 2-րդ գ) կետի պահանջները, մասնավորապես 2014-2015 թվականների ուսումնական տարվա ընթացքում նպատակային ուսուցմամբ Համալսարանի հեռակա ուսուցման համակարգում սովորող 187 ուսանողներից գանձվել է՝ 6,975.4 հազ.դրամ ուսման վարձ, իսկ 2015-2016 թվականների ուսումնական տարվա ընթացքում 195 ուսանողներից գանձվել է՝ 6,574.9 հազ.դրամ ուսման վարձ, խախտումը առաջացել է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հուլիսի 31-ի թիվ 717-Ա/Ք հրամանով սահմանված տարեկան՝ 50.0 հազ.դրամի չափով գանձված վարձավճարներից:

4. Պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողների հետ Համալսարանը կնքում է պայմանագրեր ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից տրված ձևին համապատասխան, 4 օրինակից՝ մինչև նրանց հրամանագրումը: Հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների հետ չի կնքվել ընթացակարգով նախատեսված պայմանագրեր: Խախտվել է ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն որոշման պահանջները: Ինչն էլ անհնարին է դարձնում նրանց հետագա նպատակային աշխատանքային գործունեության պայմանագրային պարտավորությունների վերահսկողությունը:

5. Խախտվել է ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված կարգը՝ պետական նմուշի դիպլոմները շրջանավարտներին տրամադրվել են անմիջապես ավարտելուց հետո՝ առանց 3-ամյա մասնագիտական աշխատանքային ստաժը հաստատող տեղեկանքի: Ինչն էլ լրացուցիչ հնարավորություն է ստեղծել ուսանողներին խուսափել պայմանագրով նախատեսված պարտավորություններից:

6. Որևէ իրավական նորմով սահմանված չի նպատակային ուսուցումն ավարտած շրջանավարտների աշխատանքի ընդունման նկատմամբ Համալսարանի կողմից հսկողություն իրականացնելու իրավական գործառույթ, սակայն նպատակային ուսուցման կազմակերպման նպատակով կնքված թվով 10 պայմանագրերի խախտման արդյունքում ուսանողներից բռնագանձվել է՝ 5,491.0 հազ.դրամ ուսման վճար, ինչը մնացել է Համալսարանի արտաբյուջետային հաշվին և չի փոխանցվել պետական բյուջե:

7. Բջջային և ինտերնետ կապ սպասարկող «Արմենթել» ՓԲԸ-ի և «Օրանժ-Արմենիա» ՓԲԸ-ի հետ ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1130-Ն որոշմամբ սահմանված Համալսարանի, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության և կազմակերպությունների միջև պայմանագրեր չեն կնքվել, որի արդյունքում պետական բյուջեն կստանար լրացուցիչ եկամուտ:

8. ՀՀ ԿԳՆ-ն անտեսելով 2010 թվականի հունիսի 10-ի թիվ 554-Ա/Ֆ հրամանի 1-ին կետով հաստատված 300 տեղի փոխարեն «Հանրակրթական ուսուցման շրջանակներում իրականացվող կրթական ծառայողական գնման» պետական պայմանագրով 2015 թվականին հատկացրել է 320 տեղ, 2016 թվականին՝ 334 տեղ, այսինքն սահմանային տեղերից միջին տարեկան երեխաների թիվը ավել է հատկացվել՝ 2015 թվականին 20, 2016 թվականին 34 աշակերտների հաշվով:

9. Վերահսկվել է Համալսարանի և «Կոմպաս» ՍՊԸ-ի միջև կնքված համակարգիչների ձեռք բերման պայմանագիրը՝ 7,668.1 հազ.դրամ արժեքով: Փաստացի գնումը կատարվել է շուկայական գներից՝ 589.3 հազ.դրամ թանկ:

10. Վերահսկվել է Համալսարանի և «Յուգեր-Սիստեմզ» ՍՊԸ-ի միջև կնքված համակարգիչների ձեռք բերման պայմանագիրը՝ 3,624.1 հազ.դրամ արժեքով: Փաստացի գնումը կատարվել է շուկայական գներից՝ 378.0 հազ.դրամ թանկ:

11. Վերահսկվել է Համալսարանի և «Տոսպ» ՍՊԸ-ի միջև կնքված համակարգիչների ձեռք բերման պայմանագիրը՝ 4,600.0 հազ.դրամ արժեքով: Փաստացի գնումը կատարվել է շուկայական գներից՝ 380.0 հազ. դրամ թանկ:

Վերահսկողության արդյունքներով ներկայացվել են հետևյալ առաջարկությունները

«Հ կրթության և գիտության նախարարությանը»

1. Չեղարկել ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն որոշմանը հակասող ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հուլիսի 31-ի թիվ 717-Ա/Ք հրամանը:
2. Վերանայել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հունիսի 10-ի թիվ 554-Ա/Ֆ հրամանի 1-ին կետը, քանի որ այն հակասում է փաստացի կնքված պայմանագրերին:

«Հ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը»

1. Կնքել նոր եռակողմ պայմանագիր Համալսարանի, բջջային և ինտերնետ կապ սպասարկող կազմակերպությունների միջև:

«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ին՝

1. Ազատ դրամական միջոցները ներդնել ավանդային հաշվեհամարին և ստանալ լրացուցիչ եկամուտ:
2. Բացառել ուսումնական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման գործընթացում խախտումները:
3. Համաձայն ՀՀ կառավարության 27.07.2006թ. թիվ 1183-Ն որոշման հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների հետ կնքել ընթացակարգով նախատեսված պայմանագրեր:
4. Նախահաշվային գների կազմման ժամանակ ուշադրություն դարձնել շուկայական գների ուսումնասիրմանը, հիմք ընդունելով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրական շուկայական գները:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան հաշվետվությունում, որին կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.3 ՀՀ կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ

Վերահսկողությունն իրականացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների և արտաբյուջետային միջոցների օգտագործման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ:

Վերահսկողության օբյեկտ է հանդիսացել ՀՀ կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը:

Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել է դիտարկման և վերլուծության ձևը: Դիտարկման փուլում իրականացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամից ստացված տվյալների ուսումնասիրություն: Վերլուծության փուլում վերլուծվել և ամփոփվել են դիտարկման արդյունքները:

Վերահսկողության արդյունքներով արված հիմնական եզրահանգումները

1. Համալսարանի շենք շինությունների ընթացիկ նորոգման՝ ներքին հարդարման, տարածքների բարեկարգման և այլ փոքրածավալ շինարարական աշխատանքները իրականացվել են քաղաքաշինական նորմերի խախտումներով:

Չեն պահպանվել ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» կարգի 7-րդ գլխի 138-րդ կետի, ինչպես նաև ՀՀ քաղաքաշինության նախարարի 1998 թվականի ապրիլի 28-ի թիվ 44 «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ»-ի 5.2 կետի (հավելված 1-ի) պահանջները:

2. 2015թ. եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվով նախատեսված ծախսային 4 հոդվածներով նախահաշիվը տարեկան հաստատված գնումների պլանից էականորեն շեղված է: Իսկ տարեվերջյան փաստացի գնումները էականորեն չեն համապատասխանում կազմված նախահաշվին և տարեսկզբին հաստատված գնումների պլանին:

3. Վարկային միջոցների ներգրավման ժամանակահատվածներում՝ 01.08.2015թ. մինչև 31.12.2015թ., 01.01.2016թ. մինչև 01.06.2016թ., համալսարանի բանկային հաշիվներին առկա են եղել համապատասխանաբար 261,900.0 հազ. դրամից մինչև 1,221,600.0 հազ. դրամ, 797,400.0 հազ. դրամից մինչև 947,600.0 հազ. դրամ մնացորդներ: Համալսարանը նույն ժամանակահատվածում իր հաշվին իրականացրել է այլ ծախսեր, այդ թվում՝ հովանավորչական գործունեության շրջանակում և այլն: Բացի վերոգրյալից 2015 թվականի ընթացքում համալսարանում հանրակացարանային ծառայությունների դիմաց գանձվել (մուտքագրվել) է 158,000.0 հազ. դրամ գումար, որից որոշակի գումարների հաշվին համալսարանին պատկանող չօգտագործվող շենք շինությունների վրա շինարարական կամ մոնտաժային աշխատանքների կատարման դեպքում ծախսերի արդյունավետության տեսանկյունից կարող էր տնտեսվել վարձակալության համար ծախսված շուրջ 34,200.0 հազ. դրամը:

Վերահսկողության արդյունքներով ներկայացվել են հետևյալ առաջարկությունները

ՀՀ կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին՝

1. Այսուհետ առաջնորդվել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» կարգի 7-րդ գլխի 138-րդ կետի, ինչպես նաև ՀՀ քաղաքաշինության նախարարի 1998 թվականի ապրիլի 28-ի թիվ 44 «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ»-ի 5.2 կետի (հավելված 1-ի) պահանջներով:

2. Այսուհետ տարեկան գնումների պլանը կազմել հաշվի առնելով առանձին ստորաբաժանումների կարիքների համար գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների պահանջարկը, այնուհետ այն արտացոլել տարեկան նախահաշվում:

3. Պետական սեփականության կառավարման և օգտագործման տեսանկյունից վերլուծել համալսարանի ֆինանսական վիճակը, և արդյունավետ կառավարման իրականացման պայմաններում, քննարկել նոր վարկեր ներգրավելու կամ գոնե ոչ այդքան մեծ ծավալի պարտավորություններ ստանձնելու հարցը՝ խուսափելով հետագա տոկոսագումարների (լրացուցիչ ծախսերի) վճարումներից:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան հաշվետվությունում, որին կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.4 ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն

Վերահսկողությունն իրականացվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից իրականացվող հետևյալ ծրագրերի նկատմամբ՝

- «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» ծրագիր
- «Ավտոճանապարհների պահպանում և շահագործում» ծրագիր
- «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» ծրագիր:

Վերահսկողության օբյեկտ է հանդիսացել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը:

Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել են դիտարկման և վերլուծության ձևերը, ինչպես նաև համապատասխանության, կատարողական և ֆինանսական վերահսկողության տեսակները: Դիտարկման փուլում իրականացվել է վերահսկվող օբյեկտից ստացված տեղեկատվության ուսումնասիրություն, կատարվել է տարբեր փաստաթղթերի և տվյալների ուսումնասիրություն: Վերլուծության փուլում համադրվել և վերլուծվել են դիտարկման ընթացքում արձանագրված փաստերը:

Վերահսկողության արդյունքներով արված հիմնական եզրահանգումները

1. «Ավտոճանապարհների պահպանում և շահագործում» ծրագրում ավտոմոբիլային ճանապարհների վիճակի գնահատումն իրականացվել է առանց լրացուցիչ ցուցանիշները հաշվի առնելու:

2. «Ավտոճանապարհների պահպանում և շահագործում», «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» և «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» ծրագրերը ավարտված չեն՝ ընթացքի մեջ են, ուստի ծրագրերի ցուցանիշների կատարումը անհրաժեշտ է ուսումնասիրել և կատարման արդյունավետության վերաբերյալ եզրակացություն տալ հնարավոր կլինի ծրագրերով նախատեսված աշխատանքների ավարտից հետո:

Վերահսկողության արդյունքներով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը առաջարկվել է ձեռնարկել միջոցներ ծրագրերով նախատեսված բոլոր աշխատանքները սահմանված ժամկետում ավարտելու, ինչպես նաև՝ ծրագրերով սահմանված արդյունքային ցուցանիշների կատարումն ապահովելու ուղղությամբ:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան հաշվետվությունում, որին կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.5 ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով

Վերահսկողությունն իրականացվել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաև բյուջետային մուտքերի ապահովման նկատմամբ:

Վերահսկողության օբյեկտ է հանդիսացել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը:

Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևով: Վերահսկողության ընթացքում կիրառվել են համապատասխանության, ֆինանսական և արդյունավետության վերահսկողության տեսակները: Վերահսկողության ընթացքում հավաքված անհրաժեշտ տեղեկատվության և փաստաթղթերի հիման վրա կատարվել է փաստացի վիճակի և օրենքներով ու իրավական ակտերով սահմանված պահանջների համապատասխանության ուսումնասիրություն: Կատարվել է ստուգման արդյունքներով արձանագրված փաստերի վերլուծություն:

Վերահսկողության արդյունքներով արված հիմնական եզրահանգումները

1. Գների ուսումնասիրության համար 2015 թվականին Հանձնաժողովի երկու աշխատող 14 օրով գործուղվել են Սյունիքի մարզ: Գործուղման հաշվետվության, կատարված աշխատանքների տեղեկանքի և գիշերավարձի ծախսը հիմնավորող փաստաթղթերի համաձայն՝ աշխատողները գործուղման վայրում գտնվել են 9 օր:

2. 2014 և 2015 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հատուկ նպատակային այլ ծախսեր» հոդվածով դրամարկղի կանխիկ դրամի մնացորդները՝ համապատասխանաբար 305.7 հազ. դրամ և 45.6 հազ. դրամ Հանձնաժողովը չի փոխանցել պետական բյուջե, որով խախտել է ՀՀ կառավարության «ՀՀ պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» 18.01.2002թ. թիվ 48

որոշմամբ հաստատված կարգի 68-րդ կետի պահանջը, իսկ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվություններում «Հատուկ նպատակային այլ ծախսեր» հոդվածի դրամարկղային ծախսի ցուցանիշներում մնացորդների չափով առկա է սխալ:

3. 2015 թվականին Հանձնաժողովի «թեժ» գիծ ներկայացվել է բողոք, որ կահույքի երեք սրահներում ապրանքը կանխիկ և փոխանցումով վաճառվում է տարբեր գներով: Հանձնաժողովի նախագահի հրամանի հիման վրա առևտրի այդ սրահներից կատարվել են բազկաթոռների և պահարանների հսկիչ գնումներ, որի համար դրամարկղից հատկացվել է 2,250.0 հազ. դրամ կանխիկ գումար: Հանձնաժողովի 23.05.2011թ. թիվ 192-Ն՝ «Հսկիչ գնումների արդյունքում ձեռք բերված ապրանքների տնօրինման կարգը հաստատելու մասին» որոշման կարգի 8-րդ կետի ա) ենթակետի համաձայն՝ գնված կահույքը 2016 թվականի հունվարին հաշվառվել է Հանձնաժողովի հաշվեկշռում: Արդյունքում, Հանձնաժողովը «Հատուկ նպատակային այլ ծախսեր» հոդվածով հսկիչ գնումների համար հատկացված միջոցների հաշվին իր կարիքների համար ձեռք է բերել գրասենյակային կահույք այն դեպքում, երբ 2015 թվականին պետական բյուջեից կահույք գնելու համար Հանձնաժողովին գումար նախատեսված չէր:

4. 2016 թվականին «Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելության ծախսեր» ծրագրով գնումները առանձին դեպքերում կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդված 1-ին մասի պահանջների խախտումով՝ գնվող ապրանքների և ծառայությունների տեխնիկական բնութագրերը ամբողջությամբ և հստակ չեն նկարագրել դրանց հատկանիշները:

5. Հանձնաժողովը 2015 թվականին երեք որոշումներով նշանակել է ընդամենը 4,000.0 հազ. դրամ տուգանք, 2016 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ ինը որոշումներով՝ ընդամենը 70,600.0 հազ. դրամ տուգանք:

6. 2015 թվականին Հանձնաժողովի որոշումներով նշանակված տուգանքների հաշվին պետական բյուջե մուտք է եղել 64,451.0 հազ. դրամ, որից 1,000.0 հազ. դրամը՝ 2015 թվականին նշանակված տուգանքներից, մնացածը՝ նախորդ տարիներին նշանակված տուգանքներից: 2016 թվականին ստուգման պահի դրությամբ նշանակված տուգանքների հաշվին պետական բյուջե մուտք է եղել 6,558.5 հազ. դրամ, որից 5,200.0 հազ. դրամը՝ 2016 թվականին նշանակված տուգանքներից, մնացածը՝ նախորդ տարիներին նշանակված տուգանքներից:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան հաշվետվությունում, որին կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.6 ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

Վերահսկողությունն իրականացվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում հետևյալ ուղղությունների նկատմամբ՝

- Պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործում,

- Արտաբյուջետային միջոցների օգտագործում,
- Բյուջետային և արտաբյուջետային միջոցների մուտքերի ապահովում,
- Պետական սեփականության կառավարում և օգտագործում:

Վերահսկողության օբյեկտ է հանդիսացել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն:

Վերահսկողության ընթացքում կիրառվել են համապատասխանության և ֆինանսական վերահսկողության տեսակները: Վերահսկողության ընթացքում վերահսկվող օբյեկտի մասին նախնական պատկերացում կազմելու համար իրականացվել է տեղեկատվության հավաքագրում և փաստաթղթերի ուսումնասիրություն:

Վերահսկողության արդյունքներով արված հիմնական եզրահանգումները

1. Կոմիտեի ստորաբաժանումների կողմից 2015 թվականին մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտներ է նախատեսվել 4,181,799.5 հազ. դրամ, փաստացի եկամուտները կազմել են 3,230,133.9 հազ. դրամ:
2. «Աշխատողների աշխատավարձերի, հավելավճարների, պարգևատրումների և խրախուսումների» համար նախատեսվել են իրականացնել 3,021,246.3 հազ. դրամի ծախսեր, փաստացի ծախսերը կազմել են 2,227,799.4 հազ. դրամ: ՀՀ կառավարության 24.12.2015թ. թիվ 1570-Ն որոշմամբ «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարների» համար 2015թ-ին Կոմիտեին տրամադրվել է 100,000.0 հազ. դրամ:
3. Կոմիտեն ՀՀ-ում գործող թվով 16 սպասարկման գրասենյակների և թվով 4 տարածքային ստորաբաժանումների գործառույթների ապահովման համար վարձակալել է 3848.5 քմ տարածք, տարեկան վարձավճարի չափը կազմել է 63,680.5 հազ. դրամ: Թվով 12 սպասարկման գրասենյակների զբաղեցրած տարածքները հանդիսանում են համայնքային սեփականություն, իսկ թվով 4 սպասարկման գրասենյակների և թվով 4 տարածքային ստորաբաժանումների զբաղեցրած տարածքները վարձակալվել են մասնավոր անձանցից: Համայնքներից վարձակալված գույքի 1 քմ-ի տարեկան վարձավճարի չափը կազմել է 2.4-ից մինչև 6.0 հազ. դրամ, իսկ մասնավոր սեփականատերերից վարձակալված գույքի 1 քմ-ի տարեկան վարձավճարի չափը՝ 8.6 հազ. դրամից մինչև 49.2 հազ. դրամ:
4. Կոմիտեի աշխատակազմի գեղդեզիայի և հողային պետական տեսչության կողմից 2015 թվականին ստուգումներ են իրականացվել ՀՀ 10 մարզերի մարզպետարանների աշխատակազմերի հողաշինության և հողօգտագործման բաժիններում, մարզային հողային պետական տեսչություններում: Տեսչության կողմից ՀՀ մարզպետարաններին ներկայացվել է միջնորդություն՝ թվով 70 համայնքների պաշտոնատար անձանց 17,300.0 հազ. դրամ գումարի չափով պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Մարզպետարանների կողմից կայացվել է թվով 28 համայնքների պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու մասին որոշումներ՝ 3,700.0 հազ. հազ. դրամի չափով: 2015 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է ընդամենը 3,808.0 հազ. դրամ, այդ թվում 2015 թվականին կիրառված վարչական տույժերից գանձվել է 2,000.0 հազ. դրամ, իսկ 1,808.0 հազ. դրամը նախորդ տարիներին կիրառված տույժերից:

5. 2015 թվականին ՀՀ պետական բյուջեից «Գեոդեզիայի և քարտեզագրման կենտրոն» ՊՈԱԿ-ի եկամուտները կազմել են 392,019.2 հազ. դրամ, որից պետական բյուջեից հատկացումները կազմել են 385,819.2 հազ.դրամ, ձեռնարկատիրական գործունեությունից՝ 5,686.6 հազ. դրամ:

6. Կոմիտեի մասնագետների ու աշխատակիցների վերապատրաստման, մասնագիտական որակավորման բարձրացման, տեղեկատվական վերլուծական նյութերի պատրաստման աշխատանքների կատարման համար Կոմիտեն «ՌԽումնամեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ին փաստացի ֆինանսավորել է 8,565.0 հազ. դրամի չափով և 2015 թվականին ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները կազմել են 1,330.0 հազ. դրամ:

Վերահսկողության արդյունքներով ներկայացվել են հետևյալ առաջարկությունները

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին՝

1. Ձեռնարկել միջոցառումներ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակների և տարածքային ստորաբաժանումների համար մասնավոր անձանցից վարձակալված տարածքների տարեկան վարձավճարների գումարները իջեցնելու ուղղությամբ:

2. Առաջարկել «Գեոդեզիայի և քարտեզագրության» և «ՌԽումնամեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ներին իրենց ոլորտում համապատասխան ակտիվություն ցուցաբերել և ձեռնարկել միջոցառումներ հայտարարված մրցույթները շահելու ուղղությամբ, որը ձեռնարկատիրական գործունեության ոլորտներում ՊՈԱԿ-ներին կապահովի լրացուցիչ եկամուտներ:

3. Հաշվի առնելով գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից արձանագրված և փաստացի մուտքագրված գումարների զգալի տարբերությունը՝ առաջարկում ենք հետևողական լինել և ձեռնարկել միջոցառումներ փաստացի արձանագրված և ՀՀ պետական բյուջե մուտքագրված գումարների միջև տարբերությունը նվազեցնելու ուղղությամբ:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան հաշվետվությունում, որին կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.7 ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե

Վերահսկողությունն իրականացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեում հետևյալ ուղղությունների նկատմամբ՝

- ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի՝ «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերություններում պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործում և պետական սեփականության կառավարում և օգտագործում,

- օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրերի միջոցների օգտագործում:

Վերահսկողության օբյեկտներ են հանդիսացել ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմը, «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունները:

Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևերը: Դիտարկման փուլում իրականացվել է վերահսկողության օբյեկտներից ստացված տվյալների ուսումնասիրություն, ինչի արդյունքում ստուգում է կատարվել նշված օբյեկտներում: Վերլուծության փուլում վերլուծվել և ամփոփվել են ստուգման արդյունքները:

Վերահսկողության արդյունքներով արված հիմնական եզրահանգումները

1. «Նոր Ակունք», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների խմելու ջրի հոսակորուսների փաստացի ցուցանիշները զգալի գերազանցում են կառավարման պայմանագրով սահմանված ցուցանիշներից:
2. «Նոր ակունք» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների կողմից չեն ապահովվել կառավարման պայմանագրով սահմանված հավաքագրված հասույթի ցուցանիշները:
3. ՀՀ կառավարության 22.01.2004թ. թիվ 130-Ն որոշման համաձայն ցայտադրյալների և ընդհանուր բակային ծորակների շահագործումն իրականացվում է ջրամատակարարի հետ կնքված պայմանագրի համաձայն, սակայն «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից իր սպասարկման տարածքի համայնքների ցայտադրյալներին և ընդհանուր բակային ծորակների որոշ մասին հատկացված ջրի քանակները ներառվել են չֆակտուրացված ջրի քանակներում, որից հասույթ չի ձևավորվում:
4. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և ՀՀ բնապահպանության նախարարության կողմից չեն հաստատվել ջրային համակարգերում կորուստների նորմատիվները:

Վերահսկողության արդյունքներով ներկայացվել են հետևյալ առաջարկությունները

«Նոր ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ներին՝

1. Ձեռնարկել միջոցներ կառավարման պայմանագրով նախատեսված հոսակորուստների ցուցանիշները ապահովելու նպատակով:
2. Ձեռնարկել միջոցներ «Նոր ակունք» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների հավաքագրված հասույթների կառավարման պայմանագրով նախատեսված ցուցանիշներն ապահովելու նպատակով:
3. «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքի համայնքների ցայտադրյալների և ընդհանուր բակային ծորակների շահագործումը իրականացնել ՀՀ կառավարության 22.01.2004թ. թիվ 130-Ն որոշման դրույթներին համապատասխան:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան հաշվետվությունում, որին կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.8 Օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրերի միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողություն

2.8.1. «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկում իրականացված վերահսկողություն

Վերահսկողությունն իրականացվել է օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրերի միջոցների օգտագործման նկատմամբ:

Վերահսկողության օբյեկտ է հանդիսացել «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը:

Վերահսկողության ընթացքում կիրառվել է դիտարկման և վերլուծության ձևը, ինչպես նաև համապատասխանության, կատարողական և ֆինանսական վերահսկողության տեսակները: Դիտարկման փուլում կատարվել է վարկային և դրամաշնորհային ծրագրերի իրականացման ընթացքի, մրցութային գործընթացների, ըստ կատեգորիաների և ուղղությունների՝ կատարված ծախսերի, ինչպես նաև առաջադրված նպատակների իրագործման վերաբերյալ ներկայացված տեղեկատվության ուսումնասիրություն: Վերլուծության փուլում ամփոփվել և վերլուծվել են դիտարկման արդյունքները և արձանագրված փաստերը:

Վերահսկողության արդյունքներով արված հիմնական եզրահանգումները

1. Աշխատանքներն իրականացնելիս որոշ դեպքերում չեն ապահովվել տեխնիկական մասնագրերով պահանջվող բիտումի ծագման հավաստագրերը:
2. Որոշ դեպքերում առանձին աշխատանքներն ընդունվել են առանց շինարարական նորմերով նախատեսված բոլոր պարտադիր կատարման ենթակա ստուգումներն իրականացնելու:
3. Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավում ծրագրով և Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման լրացուցիչ ֆինանսավորման ծրագրով նախատեսված աշխատանքներն ավարտված չեն՝ ընթացքի մեջ են, իսկ Մ6-Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրով նախատեսված աշխատանքները դեռ չեն սկսվել, ուստի ծրագրերի ցուցանիշների կատարումը անհրաժեշտ է ուսումնասիրել և կատարման արդյունավետության վերաբերյալ եզրակացություն տալ հնարավոր կլինի ծրագրերով նախատեսված աշխատանքների ավարտից հետո:

Վերահսկողության արդյունքներով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին

առաջարկվել է ձեռնարկել միջոցներ ծրագրերով նախատեսված բոլոր աշխատանքները սահմանված ժամկետում ավարտելու, ինչպես նաև՝ ծրագրերով նախատեսված արդյունքային ցուցանիշների կատարումն ապահովելու ուղղությամբ:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան հաշվետվությունում, որին կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.8.2 «Կրթական ծրագրերի կենտրոն» պետական հիմնարկում իրականացված վերահսկողություն

Վերահսկողությունն իրականացվել է օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրերի միջոցների օգտագործման նկատմամբ:

Վերահսկողության օբյեկտ է հանդիսացել «Կրթական ծրագրերի կենտրոն» պետական հիմնարկը:

Վերահսկողությունն իրականացվել է վերահսկողության՝ դիտարկման և վերլուծության ձևերով, ֆինանսական, արդյունավետության (կատարողական) և համապատասխանության տեսակների կիրառմամբ:

Վերահսկողության արդյունքներով արված հիմնական եզրահանգումները

1.Վարկային միջոցների ծախսերի նախատեսումը (գնումների պլան) հաշվարկներով հիմնավորված չէ: Նախատեսումների, հատկացումների և փաստացի վճարների միջև առկա են էական շեղումներ: 2016 թվականի առաջին կիսամյակի արդյունքներով ֆինանսավորումը կազմել է 492,522.5 հազ.դրամ, որից՝ վարկային միջոցներ 261,652.9 հազ.դրամ, համաֆինանսավորումը՝ 230,869.6 հազ.դրամ: Փաստացի վճարումը՝ 199,617.2 հազ.դրամ, այն դեպքում, երբ պետական բյուջեով նշված ժամանակահատվածի համար նախատեսվել է 1,054,711.5 հազ.դրամի ծախս: Գնումների պլանով գործողությունների համար սահմանված ժամկետները չեն պահպանվել: 2016 թվականի առաջին կիսամյակի կատարողականը կազմել է 18.9% ($199,617.2/1,054,711.5 \times 100$):

2.Դպրոցական կահույքի ձեռքբերման նախահաշվային արժեքը էական բարձր է ստացվել (շուրջ երկու անգամ), որը հետևանք է ինտերնետային կայքերից վերցրած համապատասխան տեղեկատվության: Ձևավորված 5 խմբաքանակներով իրականացված գնման արդյունքում նույն տեխնիկական բնութագրերով նույն ապրանքը, կազմակերպությունների կողմից տարբեր խմբաքանակներում առաջարկվել է գնային էական տարբերությամբ: Եթե ԾԻԳ-ը խմբաքանակները ձևավորեր այլ սկզբունքով՝ ըստ առանձին անուն ապրանքների (5 խմբաքանակ) կամ ըստ իրար փոխլրացնող ապրանքների (4 խմբաքանակ), ապա ելնելով մրցույթի փաստացի արդյունքների հիման վրա կատարված հաշվարկներից կարող էր տնտեսվել շուրջ 200,000.0 հազ.դրամի չափով վարկային և բյուջետային միջոցներ: Մատակարարված աշակերտական և

ուսուցչական աթոռները չեն համապատասխանում տեխնիկական բնութագրի որոշ պահանջների: Մատակարարված ուսուցչական աթոռի գները բարձր են շուկայում առկա նույն աթոռի գներից:

3. Լոռու մարզի երկու դպրոցների վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկատվության տրամադրման հետևանքով կրկնակի կահույք և համակարգչային սարքավորումներ է մատակարարվել (մի դեպքում որպես ավագ, մյուս դեպքում որպես միջնակարգ): Մատակարարված կահույքի արժեքը կազմել է 6,304.7 հազ.դրամ, համակարգչային սարքավորումների արժեքը՝ 19,017.9 հազ.դրամ:

4. ՀՀ կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ ԿԳՆ) առաջարկով միջնակարգ դպրոցների ավագ դասարաններում սովորող աշակերտների թվի հարաբերական աճով պայմանավորված (վիճակագրական համապատասխան տեղեկատվության համաձայն՝ դրանց թիվը համեմատաբար նվազում է), ավելացվել է աշակերտական կահույքի և համակարգչային սարքավորումների քանակը, հետևաբար նաև՝ համապատասխան պայմանագրերի գները (կահույքի պայմանագրի գինը ավելացվել է 28,276.4 հազ.դրամով, համակարգչային սարքավորումներինը՝ 123,616.6 հազ.դրամով): Ավելացված քանակները հատկացվել են ԿԳՆ-ին: 2016 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ 23,001.4 հազ.դրամի կահույքը և 51,908.1 հազ.դրամի համակարգչային սարքավորումները բաշխված չէին և գտնվում էին համապատասխան մատակարարների պահեստներում:

5. ԿԳՆ-ի առաջարկով «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին հատկացնելու նպատակով ավելացվել է լաբորատոր սարքավորումների քանակը, որի արդյունքում կնքված պայմանագրի գինը ավելացվել է 149,013.4 հազ.դրամով: Լաբորատոր սարքավորումների ավելացված քանակի ձեռք բերման գործընթացում չի պահպանվել Համաշխարհային բանկի ուղեցույցներին համապատասխան կազմված մրցութային փաթեթի 41.1 կետի պահանջը, համաձայն որի մինչև պայմանագիր կնքելը, պայմանագրի գինը կարող է փոփոխվել 15%-ի շրջանակում: Սակայն, պայմանագրի գնի ավելացումն իրականացվել է պայմանագիրը կնքելուց 39 օր հետո՝ պայմանագրի գնի շուրջ 60%-ի չափով: Պայմանագրի գինը կարող էր ավելացվել 37,253.4 հազ.դրամի չափով: Արդյունքում, 111,760.1 հազ.դրամի լաբորատոր սարքավորումների ձեռքբերումն իրականացվել է առանց մրցույթի:

6. Ավելացված լաբորատոր սարքավորումները հատկացվել են «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի Երևանի, Գորիսի և Վանաձորի մասնաճյուղերին, այն դեպքում, երբ դրանք ի սկզբանե նախատեսվել են մանկավարժական կադրեր պատրաստող ԲՈՒՀ-երի համար: Վարկային և բյուջետային միջոցները, համապատասխան չափով, նպատակային չեն օգտագործվել:

7. Ըստ առարկաների (մասնագիտությունների)՝ 38,939.4 հազ. դրամի լաբորատոր սարքավորումներ են հատկացվել Վանաձորի, Գորիսի և Գավառի պետական համալսարաններին, որոնք նախատեսված առարկաների գծով մանկավարժական կադրեր չեն պատրաստում (մասնագիտացված մանկավարժություն ուղղվածությունն առկա չէ): Վարկային և բյուջետային միջոցները, համապատասխան չափով, նպատակային չեն օգտագործվել:

8. Ապրանքների հանձնման-ընդունման գործընթացը կարգավորված չէ: ԾԻԳ-ը որպես պատվիրատու ապրանքներն ընդունել է մատակարարի կողմից դրանք շահառուներին բաշխելուց հետո՝ մատակարարի և շահառուի միջև կնքված կատարողական ակտի հիման վրա: ԾԻԳ-ը կարող էր ապրանքներն ընդունել, այնուհետև՝ հանձնարարել մատակարարներին՝ ցանկին համապատասխան իրականացնել դրանց բաշխումը, որի արդյունքում կբացառվեր տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող ապրանքների (տվյալ դեպքում՝ աշակերտական և ուսուցչական աթոռի) մատակարարումը:

9. Հիմնական և ավագ դպրոցներում «ֆիզիկա», «քիմիա», «երկրաչափություն» և «կենսաբանություն» առարկաների գծով ինտերակտիվ դասընթացներ կազմակերպելու համար ձեռքբերված կրթական համակարգը (ծրագիրը) թեև անհրաժեշտ է հանրակրթության բարեփոխումների իրականացման համար և կրթության որակի բարձրացմանը նպաստող կարևոր գործիք է, այնուամենայնիվ համակարգը (ծրագիրը) չի կարող լիարժեք և արդյունավետ գործել հետևյալ հիմնավոր պատճառներով՝ ինտերակտիվ ուսուցումը դեռևս «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով պարտադիր ուսուցման ձև չէ: Դասապրոցեսն ինտերակտիվ ձևով կազմակերպելն ընդամենն ուսուցչի ցանկությունն է: Ոչ բոլոր դպրոցներն են լիարժեք ապահովված համապատասխան համակարգչային (շարժական) սարքավորումներով և հարակից ժամանակակից տեխնիկական այլ միջոցներով: Վերոնշյալ առարկաները դասավանդող ուսուցիչների հիմնական մասը չի տիրապետում տեղեկատվական տեխնոլոգիաների համապատասխան ունակությունների: Ուսումնական պլանների մեթոդական ցուցումներում պատշաճ ներկայացված չեն վերոնշյալ առարկաների ինտերակտիվ ձևով ուսուցման հնարավորությունները: Նշված առարկաներից երեքի մասով, համաձայն պայմանագրի, ծրագիրը մշակվել է առարկայական չափորոշիչներով նախատեսված լաբորատոր աշխատանքների և ցուցադրությունների 50%-ի չափով: Մնացած ծավալի 50%-ի մշակման ժամկետները հստակեցված չեն: Գործողության ամբողջական նպատակն իրագործված չէ:

10. 2015 թվականի և մինչև 2016 թվականի հուլիսի 1-ը հաստիքացուցակով նախատեսված որոշ հաստիքներ սահմանված կարգով չեն համալրվել և մնացել են թափուր: Ելնելով մասնագետի կարիքից, քաղաքացիների հետ կնքվել են ծառայությունների մատուցման պայմանագրեր, ժամկետային աշխատանքային պայմանագրերի փոխարեն, որոնցով սահմանվել են համապատասխան պաշտոնների համար «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով (ուժի մեջ է 2014 թվականի հուլիսի 1-ից) սահմանված աշխատավարձի չափերից բարձր աշխատավարձ: Արդյունքում, վարկային և բյուջետային միջոցներից կատարվել է 2,315.9 հազ.դրամի ավելի ծախս:

11. «Աշխատանքի վարձատրություն» հոդվածի տնտեսումների հաշվին 2015 թվականի նոյեմբերի 30-ին ԾԻԳ-ի տնօրենի հրամանով և 2015 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ ֆինանսների նախարարության թույլտվությամբ և տնօրենի համապատասխան հրամանով, ԾԻԳ-ի աշխատակիցները յուրաքանչյուր հրամանի շրջանակում պարգևատրվել են մեկ ամսվա աշխատավարձի չափով, այսինքն՝ պարգևատրվել են

կրկնակի: Ընդհանուր գումարը կազմել է 18,176.8 հազ.դրամ, որն աշխատավարձի ֆոնդի 14%-ն է:

12. ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված ԾԻԳ-ի պահպանման ծախսերի 2015 թվականի նախահաշվով վառելիքի ծախս է նախատեսվել 3 ավտոմեքենայի համար (4,656.9 հազ.դրամի 9533 լիտր բենզին), այն դեպքում, երբ շահագործվել է 2-ը, կամ ավել է նախատեսվել 1,392.2 հազ.դրամի 2850 լիտր բենզին: Բացի վերոնշյալից չի պահպանվել ՀՀ կառավարության 01.06.2005թ. թիվ 1001-Ն որոշմամբ սահմանված բենզինի ծախսի նորմաները, ինչի արդյունքում ավելի է ծախսվել 838 լիտր բենզին (343.6 հազ.դրամ):

13. Ծրագրի տարբեր բաղադրիչների շրջանակներում ընտրված խորհրդատուների (բնապահպան, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի ապահովման մասնագետ և ճարտարագետ) կողմից իրականացվելիք գործառույթները, գործողությունները և պարտականությունները տեխնիկական առաջադրանքով հստակ նախատեսված չեն: Խորհրդատուները, համաձայն հաշվետվությունների, կատարել են առաջադրանքով նախատեսված գործառույթների մի մասը, կամ իրականացրել են առաջադրանքով չնախատեսված, ինչպես նաև իրենց չվերապահված և ոչ անհրաժեշտ գործառույթներ և գործողություններ, որոնք հիմնականում կապ չունեն խորհրդատվության նպատակի հետ: Անհատ խորհրդատուների ընտրության գործընթացում ծառայությունների մատուցման գնի շուրջ հիմնականում բանակցություններ չեն վարվել: Պայմանագրերը կնքվել են գնումների պլանում նախատեսված գումարի չափով: Վերը նշված խորհրդատուների կողմից աշխատանքների կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվությունների ընդունման արդյունքում (վերջինս հիմք է հանդիսանում վճարումների համար) իրականացվել է պայմանագրով նախատեսված վճարումները: 2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ խորհրդատուների մասով կատարվել է 6,603.0 հազ.դրամի ծախս (ներառյալ հարկերը): Վարկային և բյուջետային միջոցները համապատասխան չափով նպատակային և արդյունավետ չեն օգտագործվել:

14. «Դպրոցների շենքերի վերանորոգման աշխատանքների նպատակով տեխնիկական հատկորոշիչների և նախագծերի կազմում» գործողության շրջանակներում «Ինժեներ Լիգա» ՓԲԸ-ին (այսուհետ՝ ՓԲԸ) 2014 թվականին Համաշխարհային բանկի կողմից հատկացված դրամաշնորհի շրջանակում կնքված պայմանագրով նախատեսված վերջին փուլի աշխատանքները չընդունած լինելու պարագայում վարկային միջոցներից 2015 թվականին կատարվել է 7,656.9 հազ. դրամի վճարում (ներառյալ հարկերը), այն դեպքում, երբ վերոնշյալ գործողությունը նախատեսված է եղել ծրագրի նախապատրաստման դրամաշնորհի շրջանակներում և բոլոր վճարումները պետք է իրականացվեին միմիայն դրամաշնորհից: Վարկային և բյուջետային միջոցները համապատասխան չափով նպատակային չեն օգտագործվել:

15. ԾԻԳ-ի և «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի միջև 2015 թվականի նոյեմբերին կնքվել է 70,235.3 հազ.դրամի պայմանագիր: Նախորդ վարկային ծրագրի շրջանակներում նույն հետազոտության իրականացման համար 2011 թվականին կնքված պայմանագրի գինը կազմել է 48,960.3 հազ.դրամ, որի առաջին փուլի վճարումը կազմել է 9,723.3 հազ.դրամ (առաջին փուլում կատարվել են ուսումնասիրության մեթոդոլոգիայի, հարցաթերթիկների,

հարցման գործիքների մշակում և այլն): Գործող պայմանագրի տեխնիկական առաջադրանքը նույնն է, ինչ նախորդինը: 2015-2019 թվականների համար պայմանագրի կնքման նպատակով ՓԲԸ-ի կողմից ներկայացված ֆինանսական առաջարկով նախատեսվել և ԾԻԳ-ի կողմից ընդունվել են չհիմնավորված փոխհատուցվող ծախսեր և աշխատավարձ, որը նախորդ պայմանագրի ֆինանսական առաջարկով ներկայացված միևնույն աշխատանքների համար նախատեսված ծախսերից 21,269.0 հազ.դրամով (ներառյալ հարկերը) ավելի է: 2015 թվականին կնքված պայմանագրի գինը կարող էր նվազել ինչպես 2011 թվականի պայմանագրի շրջանակներում արդեն կատարված աշխատանքների համար առաջին փուլում վճարված 9,723.3 հազ.դրամի, այնպես էլ՝ չհիմնավորված 21,269.0 հազ.դրամի չափով: Հաշվի առնելով վերը նշվածը, պայմանագրի գինը կկազմեր շուրջ 40,000.0 հազ.դրամ: Կնքված պայմանագրի գինը (70,235.3 հազ.դրամ) հիմնավորված չէ:

Վերահսկողության արդյունքներով ներկայացվել են հետևյալ առաջարկությունները

«Կրթական ծրագրերի կենտրոն» պետական հիմնարկին՝

Վարկային և բյուջետային միջոցների օգտագործման, ինչպես նաև կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով, սահմանված կարգով վերանայել՝

1. Ծրագրի գնումների պլանը, մասնավորապես.

1.1 տրանսպորտային միջոցների ձեռքբերման անհրաժեշտությունը, որի համար նախատեսվել է 100.0 հազ. ԱՄՆ դոլար, հաշվի առնելով այն փաստը, որ ԾԻԳ-ի հաշվեկշռում առկա է և շահագործվում է երեք տրանսպորտային միջոց,

1.2 ծրագրի կառավարման խորհրդի կողմից հաստատված և ՀՀ ֆինանսների նախարարության հետ համաձայնեցված ԾԻԳ-ի պահպանման ծախսերի նախահաշիվը.

կապի ծառայության ծախսեր,
այլ պայմանագրային ծառայությունների ձեռքբերում,
մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում,
գրասենյակային նյութեր և պիտույքներ,
տրանսպորտային նյութեր,
վարչական սարքավորումներ հողվածներով նախատեսված միջոցների հիմնավորվածությունը:

2. Հաստիքային միավորների թիվը և պաշտոնների անհրաժեշտությունը:

3. Խորհրդատուների տեխնիկական առաջադրանքները, հստակեցնել դրանցով նախատեսվող գործառույթների, գործողությունների և պարտավորությունների շրջանակը, ինչպես նաև պայմանագրերի գինը: Դրանց իրականացման համար նախատեսել համեմատելի, իրատեսական և կատարվելիք աշխատանքների ծավալին և բարդությանը համարժեք գին:

ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝

4. Միջոցներ ձեռնարկել.

4.1 դպրոցներին կրկնակի, ինչպես նաև ավագ դասարաններում սովորող աշակերտների թվից էականորեն ավել հատկացված, պահեստավորված գույքի և համակարգչային սարքավորումների ըստ կարիքի և նպատակի վերաբաշխման և բաշխման ուղղությամբ,

4.2 Գավառի, Գորիսի և Վանաձորի համալսարաններին հատկացված 38,939.4 հազ.դրամ արժեքով նպատակային չօգտագործվող լաբորատոր սարքավորումները համապատասխան մասնագիտություն (առարկա) և մասնագիտացված մանկավարժություն ուղղվածություն ունեցող ԲՈՒՀ-ի (կամ ԲՈՒՀ-երի) հատկացնելու ուղղությամբ:

5. Թափուր հաստիքները որոշակի ժամանակահատվածում համալրելու նպատակով ԿԳՆ նախարարի 2012թ. փետրվարի 14-ի թիվ 116-Ն հրամանում կատարել լրացում, սահմանելով թափուր պաշտոն առաջանալուց հետո մրցույթի հայտարարման և անցկացման հստակ ժամկետներ:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան հաշվետվությունում, որին կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.8.3. ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի գրասենյակ» պետական հիմնարկում իրականացված վերահսկողություն

Վերահսկողությունն իրականացվել է օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրերի միջոցների օգտագործման նկատմամբ:

Վերահսկողության օբյեկտ է հանդիսացել ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի գրասենյակ» պետական հիմնարկը:

Վերահսկողության ընթացքում կիրառվել է դիտարկման և վերլուծության ձևը, ինչպես նաև համապատասխանության, կատարողական և ֆինանսական վերահսկողության տեսակները: Դիտարկման փուլում կատարվել է վարկային և դրամաշնորհային ծրագրերի իրականացման ընթացքի, մրցութային գործընթացների, ըստ կատեգորիաների և ուղղությունների՝ կատարված ծախսերի, ինչպես նաև առաջադրված նպատակների իրագործման վերաբերյալ ներկայացված ֆինանսական փաստաթղթերի, հաշվետվությունների, պայմանագրերի, կատարողական ակտերի և այլ նյութերի ուսումնասիրություն: Վերլուծության փուլում ամփոփվել և վերլուծվել են դիտարկման արդյունքները և արձանագրված փաստերը:

Վերահսկողության արդյունքներով արված հիմնական եզրահանգումները

1. ԾԻԳ-ի կողմից 2016 թվականին որոշակի միջոցներ են ձեռնարկվել «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման» ծրագրի շրջանակներում առողջապահական կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման» ծրագրի շրջանակներում միջոցառումների իրականացման, նախկինում արձանագրված թերակատարումները վերացնելու ուղղությամբ, որի մասին վկայում են 2016 թվականի հունվար-հուլիս ամիսների ընթացքում իրականացված հետազոտությունների թվաքանակի վերաբերյալ ներկայացված ցուցանիշները:

2. «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման» վարկային ծրագրի շրջանակներում «Պրոֆ. Ռ.Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ում ծրագրով նախատեսված՝ վերջնական և ամբողջական վերանորոգման շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային և ինժեներական փաստաթղթերի մշակման, շինարարական աշխատանքների կատարման և սարքավորումների մատակարարման ու տեղադրման նպատակով՝ ելնելով ծրագրի բացառիկությունից տարածաշրջանում, Համաշխարհային բանկի առաջարկությամբ և համաձայն ընթացակարգի՝ նշված աշխատանքների իրականացման նպատակով հայտարարվել է մեկ մրցույթ, իսկ պայմանագրի գինը ձևավորվել է այդ բաղադրիչների գների հանրագումարից: Չնայած աշխատանքները պետք է ավարտվեին 2017 թվականի հունվար ամսին, այդուհանդերձ, ներկայում դրանք ավարտվել են, բացառությամբ մեկ սարքի տեղադրումից՝ 9450 եվրո արժողությամբ հեմատոլոգիական վերլուծիչից, որը մատակարարման փուլում է:

Վերահսկողության արդյունքներով ներկայացվել են հետևյալ առաջարկությունները

«Առողջապահության նախարարության ԾԻԳ-ին՝

1. Շարունակել աշխատանքները ԾԻԳ-ի կողմից «Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման» վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված սքրինինգների իրականացման գործում տեղի ունեցած թերակատարման պատճառների լիովին վերացման ուղղությամբ:

2. Մշտական հսկողություն իրականացնել վարկային ծրագրերի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների մատուցման շուրջ կնքվող պայմանագրերի և խորհրդատուների ամենամսյա հաշվետվությունների, այդ ծառայությունների ծավալների ծրագրավորման հետագա կատարելագործման նկատմամբ:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան հաշվետվությունում, որին կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.8.4 «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկում իրականացված վերահսկողություն

Վերահսկողությունն իրականացվել է օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրերի միջոցների օգտագործման նկատմամբ:

Վերահսկողության օբյեկտ է հանդիսացել «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկը:

Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման և վերլուծության ձևերով, ինչպես նաև կիրառվել են ֆինանսական, արդյունավետության (կատարողական) և համապատասխանության տեսակները: Կիրառվել է ընտրանքային մեթոդի ոչ վիճակագրական եղանակ: Վերլուծության փուլում ամփոփվել և վերլուծվել են դիտարկման արդյունքում ստացված տվյալները:

Վերահսկողության արդյունքներով արված հիմնական եզրահանգումները

1. Ուսումնասիրվել է հարկային վարչարարության արդիականացման վարկային ծրագիրով «Ա-ՄԵԴԵԲ» ՍՊԸ-ի հետ 705,068 եվրո արժեքով կնքված պայմանագրով մատակարարված ապրանքների գները: Փաստացի գնումը կատարվել է մանրածախ շուկայական գնից 18.5%-ով կամ 107.511 եվրո թանկ գնով:

2. Վերահսկվել է պետական հատվածի արդիականացման 2-րդ վարկային ծրագիրով «Ֆայն» և «Լանս» ՍՊԸ-ների հետ կնքված պայմանագրերը, համապատասխանաբար՝ 103.797.0 հազ. (Առանց ԱԱՀ-ի 86.494.0) և 29.835.3 (Առանց ԱԱՀ-ի 24.862.0) հազ. դրամ արժեքով: «Լանս» և «Ֆայն» ՍՊԸ-ների կողմից մատակարարված ապրանքների գներում էական շեղումներ չեն հայտնաբերվել:

3. Վերահսկվել է էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության վարկային ծրագիրով ապրանքների ձեռք բերման համար «Զորաշեն», «Գլաձոր», «Ունիվերսալ Օրդեր» և «Տիսա» ՍՊԸ-ների հետ կնքված պայմանագրերը, համապատասխանաբար՝ 24,727.2; 33,286.9; 46,545.14; 118,110.44 հազ. դրամ, արժեքներով:

«Զորաշեն», «Գլաձոր» և «Տիսա» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքների գներում էական շեղումներ չեն հայտնաբերվել: «Ունիվերսալ Օրդեր» ՍՊԸ-ի կողմից մատակարարված 46,545.14 հազ. դրամ արժողությամբ ապրանքները ձեռք են բերվել 11,944.0 հազ. դրամ թանկ գնով: «Ունիվերսալ Օրդեր» ՍՊԸ-ն չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում հաշվարկվել է 857.0 հազ. դրամ տույժ:

4. Նորարարական լուծումներ ու տեխնոլոգիաների կենտրոնի վերակառուցման գազաֆիկացման աշխատանքների նախագծի մեջ բացակայում են խողովակաշարի տեղադրման և ամրացման նախագծային լուծումները: Սնուցող մալուխի և հողանցման իրականացման նախագծի մեջ բացակայում են հողանցման պողպատաշերտի տեղադրման և ամրացման լուծումները: Նախագծերը լրակազմ չեն:

Խախտվել են ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների հաստատման մասին» թիվ 273-Ն հրամանի 4.2 բաժնի և 4.2.5 ինժեներական սարքավորումներ, ցանցեր և համակարգեր կետի, «Հիմնական գծագրեր» պարբերության ա) ենթակետի դրույթները:

ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կառուցվող շինարարական օբյեկտներն ընդունող հանձնաժողովի կազմում լրացուցիչ ընդգրկվում է նաև ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչը: Վերոհիշյալ պահանջը կառուցապատողի կողմից չի

պահպանվել: Խախտվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշման հավելված 1-ի, թիվ 7 Ավարտական ակտի, 148-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները:

Ծածկված աշխատանքների ակտերը պատվիրատուի կողմից հաստատված չեն: Բացակայում են ծածկված աշխատանքների ներքոհիշյալ ակտերը՝ պատերի քարե շարվածք, ֆերմաների մոնտաժ, տանիքի ծածկի պատրաստում, պատուհանների և դռների բլոկների տեղադրում:

Խախտվել են ՀՀ քաղաքաշինության նախարարի 1998 թվականի ապրիլի 28-ի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգի մասին» թիվ 44 հրամանի «Ծածկված շինմոնտաժային աշխատանքների և փորձարկումների ակտերի օրինակելի ցանկ» բաժնի 11,15,17,21,23 կետերի պահանջները:

5. Գերմանահայկական հիմնադրամի կողմից իրականացված «Համակարգիչներ բոլորի համար» վարկային ծրագրի կատարման վերաբերյալ (որը կազմում է շուրջ 3.0 մլն ԱՄՆ դոլար), ամբողջական տեղեկատվություն չի տրամադրվել պայմանավորված «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված սահմանափակումներով (համաձայն 2016 թվականի մայիսի 30-ի հայ-գերմանական հիմնադրամի գրության): Արդյունքում իրականացված ծրագրի ընթացքի, նպատակայնության ու արդյունավետության, ինչպես նաև ծրագրի շրջանակներում կիրառված ընթացակարգերի և գործարքների օրինականության ու համապատասխանության, տոկոսադրույքների վճարման, վարկերի վերադարձելիության, հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ հնարավոր չէ եզրակացություն տալ:

Վերահսկողության արդյունքներով ներկայացվել են հետևյալ առաջարկությունները

«ՀՀ կառավարությանը»

1. Քննարկել արտաքին վարկային միջոցների սպասարկման և օգտագործման ժամանակ ՀՀ կենտրոնական բանկի և առևտրային բանկերի գործունեության նկատմամբ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից վերահսկողական իրավասությունները կարգավորող իրավական սահմանափակումները:

Շահառու նախարարություններին՝

1. Նախահաշվային գների կազմման ժամանակ ուշադրություն դարձնել շուկայական գների ուսումնասիրմանը, հիմք ընդունելով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրական շուկայական գները:

2. Շինարարական աշխատանքներ իրականացնելու ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության որոշումներով, քաղաքաշինության նախարարի հրամաններով ու հրահանգներով, ինչպես նաև քաղաքաշինության ոլորտում գործող նորմերի պահանջներով:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի

համապատասխան հաշվետվությունում, որին կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.9 Սոցիալական ծառայության տարածքային գործակալություններ

Վերահսկողությունն իրականացվել է ՀՀ պետական բյուջեով նախատեսված ընտանեկան և սոցիալական նպաստների, հրատապ դրամական օգնության և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի նշանակման գործընթացների նկատմամբ:

Վերահսկողության օբյեկտ են հանդիսացել սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային գործակալությունները և բաժինները:

Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել են դիտարկման, ստուգման և վերլուծության ձևերը, ինչպես նաև՝ համապատասխանության և ֆինանսական վերահսկողության տեսակները: Վերահսկողության ընթացքում ուսումնասիրվել են վերահսկվող օբյեկտներից ստացված փաստաթղթերը և տվյալները, կիրառվել են ընտրանքի, տարբեր աղբյուրներից ստացված տվյալների համադրման և համեմատման մեթոդներ: Վերլուծության փուլում ամփոփվել և վերլուծության են ենթարկվել դիտարկման և ստուգման ընթացքում ստացված նյութերն ու արձանագրված փաստերը:

Վերահսկողության արդյունքներով արված հիմնական եզրահանգումները

Արձանագրվել է «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 30.01.2014թ. «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 145-Ն որոշման մի շարք դրույթների խախտումներ: Ընդհանուր առմամբ Սյունիքի, Վայոց Ձորի, Շիրակի, Գեղարքունիքի և Տավուշի մարզպետարանների ենթակայության թվով 20 Սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (այսուհետ՝ ՍԱՏԳ) և Ջերմուկի քաղաքային համայնքի ենթակայության Ջերմուկի Սոցիալական աջակցության տարածքային բաժնի (այսուհետ՝ ՍԱՏԲ) վերահսկողության արդյունքում հայտնաբերվել են 539 դեպքով 63,618.0 հազ. դրամ գումարի չափով տարբեր բնույթի խախտումներ, մասնավորապես՝

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոնի (այսուհետ՝ «Նորք» ՏՎԿ) կողմից հարակից բազաներով ՍԱՏԳ/Բ/-ներին տրամադրված տեղեկատվության իրացման վերահսկողության արդյունքում հայտնաբերված 283 դեպքերով խախտումների գումարը կազմել է ընդհանուր 29,652.0 հազ. դրամ, որը տրամադրված տեղեկատվությունը ժամանակին և ամբողջությամբ համակարգ չմուտքագրելու և սահմանված կարգով նպաստի վճարումը չդադարեցնելու հետևանք է: Նշված խախտումների մեջ կան դեպքեր, որտեղ գործատուի տեղեկանքում աշխատավարձի չափը չի համընկել «Նորք» ՏՎԿ-ի կողմից տրված աշխատավարձի չափի մասին տեղեկատվությանը: ՍԱՏԳ-ները հիմք չեն ընդունել «Նորք» ՏՎԿ-ի կողմից տրված տեղեկատվությունը: Այդ մասով արձանագրվել է 28 դեպք 1,935.0 հազ. դրամ գումարի: Իսկ 1 դեպքում նպաստառուն իր հայտարարության համաձայն չի աշխատել, սակայն «Նորք» ՏՎԿ-ի տեղեկատվության համաձայն աշխատել է «ԻՄԻՋ Մ.Գ» ՍՊԸ-ում և ստացել է աշխատավարձ /Գործիսի ՍԱՏԳ/:

2. Նպաստառու ընտանիքների կողմից սահմանված չափաքանակից ավելի էլեկտրաէներգիայի սպառման դեպքերում հիմնականում բացակայում են սոցիալական աջակցության խորհրդի կողմից պատշաճ հիմնավորված առաջարկությունները նպաստի տրամադրումը շարունակելու վերաբերյալ:
3. Նպաստառու ընտանիքների կազմի, բնակարանային պայմանների, բնակության վայրի ճշտության ստուգման արդյունքում հայտնաբերվել է 90 խախտում՝ ընդհանուր 13,804.5 հազ. դրամի:
4. Նպաստառու ընտանիքների անդամների՝ ըստ բնակության վայրի հաշվառման և այդ տվյալների համակարգ մուտքագրման ճշտության ստուգման արդյունքում հայտնաբերվել է 26 խախտում՝ ընդհանուր 6,111.5 հազ. դրամի:
5. Նպաստառու ընտանիքների՝ իրենց ընտանիքների անդամների մասին տեղեկանքների (հարգելի բացականչերի, ուսանողների, զինծառայողների և այլն) հավաստիության և այդ տվյալների համակարգ մուտքագրման ճշտության ստուգման արդյունքում հայտնաբերվել է 33 խախտում՝ ընդհանուր 4,143.5 հազ. դրամի:
6. Միայնակ չաշխատող կենսաթոշակառուների (487) նպաստի գործերի ստուգման արդյունքում հայտնաբերվել է 9 խախտում՝ ընդհանուր 1,824.0 հազ. դրամի:
7. Նպաստառուների գործերի ուսումնասիրման արդյունքում հայտնաբերվել են ծածկագրերի սխալ կիրառման 11 դեպք, որոնց հիման վրա տրամադրվել է 730.5 հազ. դրամի նպաստ:
8. Նպաստառու ընտանիքներին, ինչպես նաև «Ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված անձանց միանվագ և եռամսյակային հրատապ օգնության տրամադրման գործերի ստուգման արդյունքում հայտնաբերվել է 71 խախտում՝ ընդհանուր 6,110.0 հազ. դրամի: Մերժված գործերով բացակայում են սոցիալական գործերը, դիմում հայտարարագրերը, ՍԱՏԳ-ների գրավոր պատասխանները, տնային այցելության արձանագրությունները, եզրակացությունները, ՍԱԽ-ում քննարկման արդյունքները:
9. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի գործերի, դրանցում առկա տեղեկանքների իսկությունն ու հավաստիությունը ստուգելու արդյունքում հայտնաբերվել է 16 խախտում՝ ընդհանուր 1,242.0 հազ. դրամի:
10. Հարակից բազաների ստացման ժամանակացույցի ճշտության ստուգման արդյունքում պարզվել է, որ հաճախ են դեպքերը, երբ ՍԱՏԳ-ները տեղեկատվությունները ստանում են 1-ից 7 ամիս ուշացումով: Արդյունքում նպաստառուները ավել են ստանում շուրջ 7 ամսվա նպաստ և ավելի ստացած նպաստը հետգանձելու խնդիր է առաջանում:
11. Սոցիալական աջակցության խորհուրդների առաջարկությունները հիմնականում կատարվել են առանց հանգամանքների ուսումնասիրության, բացակայում են տնային այցելության արձանագրությունները: Խորհրդի նիստերում քննարկվում են միանգամից մի քանի տասնյակ հարցեր: Խորհուրդների գործունեությունը կրում է ձևական բնույթ՝ հաստատելով ՍԱՏԳ տեսուչների բոլոր գործողություններն առանց բացառության:

Վերահսկողության արդյունքներով ներկայացվել են հետևյալ առաջարկությունները

«Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը»

1. Միջոցներ ձեռնարկել հարակից բազաները օրենսդրությամբ սահմանված ժամկետներում համապատասխան մարմիններից ստացման և համադրման արդյունքները ՍԱՏԳ/Բ/-ների տրամադրելու ուղղությամբ:

2. Ուժեղացնել հսկողությունը ՍԱՏԳ/Բ/-ների գործունեության նկատմամբ՝ արձանագրված խախտումների և դրանց պատճառների վերացման և հետագայում բացառելու նպատակով:

«Սյունիքի, Վայոց Ձորի, Շիրակի, Գեղարքունիքի և Տավուշի մարզպետներին՝

1. Միջոցներ ձեռնարկել վերահսկողության արդյունքներով արձանագրված խախտումները վերացնելու և հետագայում դրանք բացառելու ուղղությամբ:

2. Բարձրացնել ՍԱՏԳ/Բ/-ների պատասխանատվությունը հարակից բազաներով ստացված տեղեկատվության իրացման, եռամսյակային հրատապ օգնության տրամադրման, հավաքագրված տեղեկատվությունը սոց. անձնագրերում մուտքագրման և սոցիալական գործերում ամփոփված հիմքերի արժանահավատության նկատմամբ:

3. Առանձնահատուկ ուշադրություն դարձնել դիմում հայտարարագրերի 2-րդ կետի պահանջների համաձայն նպաստառուների ընտանիքի կազմի, եկամուտների, հասցեափոխության, բնակապայմանների վերաբերյալ սահմանված մեկամսյա ժամկետում անհրաժեշտ տեղեկատվության և հիմք փաստաթղթերի պարտադիր ապահովմանը:

4. «0»-ից բարձր անապահովության միավոր ունեցող ոչ նպաստառու ընտանիքներին անհետաձգելի լուծում պահանջող իրավիճակներում հրատապ օգնություն նշանակելու համար գործերում ապահովել օրենքով և ՀՀ կառավարության 30.01.2014թ. թիվ 145 որոշման 8-րդ հավելվածով նախատեսված հիմքերի առկայությունը:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապարասխան հաշվետվությունում, որին կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.10 Տարեցներին շուրջօրյա խնամքի ծառայություններ մատուցող կազմակերպություններ

Վերահսկողությունն իրականացվել է տարեցներին շուրջօրյա խնամքի ծառայություններ մատուցող կազմակերպություններին հատկացված բյուջետային և արտաբյուջետային միջոցների օգտագործման նկատմամբ:

Վերահսկողության օբյեկտ են հանդիսացել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմը, «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» և «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ները:

Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման և վերլուծության ձևերով: Վերահսկողության ընթացքում կիրառվել են համապատասխանության, ֆինանսական և արդյունավետության (կատարողական) վերահսկողության տեսակները: Վերահսկողության ընթացքում կատարվել է վերահսկողության օբյեկտներից ստացված տեղեկատվության ուսումնասիրություն, տարբեր տվյալների համադրում և վերլուծություն:

Վերահսկողության արդյունքներով արված հիմնական եզրահանգումները

1. Կազմակերպություններն իրենց հիմնական գործունեությանը զուգընթաց կարող էին իրականացնել նաև ձեռնարկատիրական գործունեություն, որը հիմնականում չի կատարվել և կազմակերպությունները չեն օգտվել իրենց եկամուտների համալրման հնարավորությունից: Բացի այդ կազմակերպությունների ֆինանսավորումն իրականացվել է ՀՀ պետական բյուջեից սուբսիդիայի տրամադրման պայմանագրերի համաձայն, մինչդեռ ըստ ՀՀ կառավարության «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» 24.12.2003թ. թիվ 1937-Ն որոշման՝ սուբսիդիան ծառայությունների մատուցման արդյունքում այդ կազմակերպության կրած վնասի կամ դրա մի մասի փոխհատուցումն է: Սուբսիդիան դա ընդամենը կազմակերպության ընթացիկ գործունեության արդյունքում գոյացող եկամուտների հավելում է, մինչդեռ այլ աղբյուրներից էական ֆինանսական եկամուտներ չեն ապահովվել:
2. Խախտվել է ՀՀ կառավարության 07.12.2006թ. թիվ 1784-Ն և 25.09.2015թ. թիվ 1112-Ն որոշումներով հաստատված տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգի պահանջը, ըստ որի. «Խնամքը տրամադրվում է դրա կարիքն ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ծերության սոցիալական կենսաթոշակի տարիքը լրացած, չաշխատող քաղաքացիներին»: Սակայն, «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» և «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ների մեկական խնամվողներ գտնվել են աշխատանքային հարաբերությունների մեջ գործատուների հետ:
3. Խախտվել է ՀՀ կառավարության 25.09.2015թ. թիվ 1112-Ն որոշմամբ հաստատված խնամվողների մահվան դեպքում հուղարկավորությունների կատարումը կանոնակարգող կարգի պահանջը: «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում 2015 թվականի ընթացքում մահացած թվով 4 անձանց հուղարկավորությունը կատարվել է միևնույն անձնավորության կողմից, որը որևէ ազգակցական կապ չունի հանգուցյալների հետ: Կազմակերպության կողմից, որպես ազգական ներկայացած անձին տրվել են համապատասխան տեղեկանքներ, որոնց հիման վրա յուրաքանչյուր դեպքով ստացվել են 200 հազ. դրամ գումարով թաղման պետական նպաստները:
4. Կազմակերպություններում 2015 և 2016 թվականներին սննդամթերքի գնումների պլանները հաստատվել են առանց գների սահմանման: Հետագայում կազմված և հաստատված գնման հայտերում ևս նշում չի կատարվել գնման առարկայի մեկ միավորի ձեռք բերման համար նախատեսված առավելագույն գնի մասին, մինչդեռ դա նախատեսված է կարգով:
5. 2015-2016 թվականների գնումների գործընթացում ձևավորված և մատակարարված սննդամթերքի գները զգալիորեն աճել են 2014 թվականին մատակարարված փաստացի գների համեմատ, այն դեպքում, երբ ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության

կողմից հրապարակված տվյալների վերոհիշյալ ապրանքատեսակների համար գնաճ տեղի չի ունեցել:

6. Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջը, ըստ որի գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում մատակարարման ենթակա ապրանքատեսակների համար գնումների գործընթացի արդյունքում կնքված պայմանագրերում նշված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում Նախարարի 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 138-Ա/1 հրամանով սահմանված պահանջներին, գնման պայմանագրերի մի շարք տեխնիկական բնութագրեր չեն ապահովում մատակարարվող ապրանքների միանշանակ բնութագրումը:

7. Պայմանագրերով սահմանվել է, որ ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ վաճառողը գնորդին է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը, որը մասամբ է կատարվել:

8. Խախտվել է ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջը, ըստ որի չիմնավորված ցածր գնային առաջարկի դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից պետք է պահանջվի լրացուցիչ հիմնավորումներ: «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում որոշ ապրանքների միավորի գներ ցածր են եղել շուկայական գներից:

9. «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի տարածքում անկողնային խնամքի կարիք ունեցող անձանց կենսաապահովման վիճակի բարելավման նպատակով ՀՀ կառավարության և Քուվեյթի պետության կառավարության միջև կնքված նվիրատվության պայմանագրի հիման վրա՝ պետական բյուջեներով նախատեսված արտաբյուջետային միջոցների հաշվին կառուցված մասնաշենքը դեռևս կահավորված չէ:

Վերահսկողության արդյունքներով ներկայացվել են հետևյալ առաջարկությունները

ՀՀ աշխարանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝

1. Քննարկել «Տարեցների շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրերն իրականացնող ՊՈԱԿ-ներում հայտնաբերված երևույթները և խախտումները՝ դրանց պատճառները բացահայտելու, վերացմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու նպատակով:
2. Միջոցներ ձեռնարկել գնումների կազմակերպման գործընթացի բարելավման ուղղությամբ՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով միասնական մոտեցում ՊՈԱԿ-ներում խնամքի համար անհրաժեշտ ապրանքատեսակների ձեռքբերման գործում:

3. Լրամշակել և կատարելագործել խնամյալների հաշվառումը և հաշվառումից հանումը՝ ՀՀ պետական բյուջեից ծախսերի ավելի ֆինանսավորումը բացառելու նպատակով:

4. Տուն-ինտերնատում անկողնային խնամքի կարիք ունեցող անձանց կենսապահովման վիճակի բարելավման համար, մասնաշենքի շահագործման նպատակով սեղմ ժամկետում կահավորել այն:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան հաշվետվությունում, որին կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.11 Սոցիալական փաթեթի շահառուներին պետական բյուջեից գումարների հատկացում և օգտագործում

Վերահսկողությունն իրականացվել է սոցիալական փաթեթի շահառուներին պետական բյուջեից գումարների հատկացման և օգտագործման օրինականության և արդյունավետության գործընթացի նկատմամբ:

Վերահսկողության օբյեկտ են հանդիսացել իրավական ակտերով սահմանված պետական մարմիններ (ընտրանքային):

Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել են դիտարկման և վերլուծության ձևերը:

Վերահսկողության արդյունքներով արված հիմնական եզրահանգումները

Առողջապահության փաթեթի բաղադրիչի մասով

1. Սոցիալական փաթեթի շահառուները լիարժեք չեն սպասարկվել և բուժօգնություն ստացել են ուշացումներով, քանի որ համաձայն՝ ՀՀ կառավարության 04.03.2004թ. թիվ 318-Ն որոշման Հավելված 4-ով որոշ բժշկական կազմակերպություններ կատարում են հերթագրումներ:

2. Որոշ բժշկական կազմակերպություններում չի վարվում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացիների իրազեկման թերթիկի ստացումը հաստատող համապատասխան գրանցման և հաշվառման մատյաններ:

3. Որոշ բժշկական կազմակերպություններում մի քանի վիրահատությունների համար ծառայությունները փոխհատուցման են ներկայացվել սահմանված գնի 100%-ի չափով, սակայն ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով սահմանվում է, որ եթե հիվանդը միաժամանակ վիրահատվում է նույն պրոֆիլի 2 հիվանդությունների կապակցությամբ, ապա վճարման ենթակա գումարը հաշվարկվում է հիմնական հիվանդության գնի 100%-ի և ուղեկցող հիվանդության գնի 60%-ի չափով:

4. Որոշ դեպքերում վիրահատական ծառայությունների վերաբերյալ սխալ ներկայացված հաշվետվություններով փոխհատուցման են ներկայացվել ավելի թանկ ծառայություններ, որոնք ենթակա են ճշտման:

5. Որոշ դեպքերում բուժօգնություն է ցուցաբերվել այնպիսի հիվանդությունների և վիճակների կապակցությամբ, որոնք ՀՀ կառավարության 27.03.2014թ. թիվ 375-Ն որոշման շրջանակներում փոխհատուցման ենթակա չեն:

Հանգստի ապահովման ծառայության բաղադրիչի մասով

1. Որոշ զբոսաշրջային օպերատորներ լիարժեք չեն կատարել հյուրանոցների հանդեպ իրենց ունեցած պայմանագրային պարտավորությունները, ՀՀ պետական բյուջեից ստացված գումարները ծախսել են այլ նպատակներով, ինչի պատճառով կուտակվել են պարտքեր:

2. Ամրագրման հավաստագրերը տրված են եղել սոցիալական փաթեթի շահառուների անունով, սակայն, հաճախ, սոցիալական փաթեթից փաստացի օգտվել են շահառու չհանդիսացող քաղաքացիներ:

3. Որոշ զբոսաշրջային օպերատորներ սոցիալական փաթեթի ծառայություններ են մատուցում, սակայն ընդրված չեն սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության մեջ, հաշվառված չեն ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից և գործում են հաշվառված օպերատորների հետ կնքված ենթագործակալական պայմանագրերի հիման վրա: Նշված պատճառով զբոսաշրջային օպերատորների հաշվառումը կրում է ձևական բնույթ և սոցիալական փաթեթի կարգավորման ոլորտը դառնում է ոչ բավարար թափանցիկ և վերահսկելի:

4. Սոցիալական փաթեթի գումարները ՀՀ պետական բյուջեից փոխանցվել են բանկերում բացված հաշիվներին, սակայն մի շարք բանկերի կողմից զբոսաշրջային օպերատորներին փոխանցումներ չեն կատարվել:

5. Սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակներում լիազոր մարմնի կողմից պատշաճ չեն կատարվել ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի մարտի 19-ի թիվ 170-Ն հրամանի, մասնավորապես հավելվածի 17-րդ կետի պահանջները:

6. Որոշ զբոսաշրջային օպերատորների մոտ արձանագրվել են հարկային օրենսդրության պահանջների հնարավոր խախտման դեպքեր (2-րդ գլխի 6-րդ, 15-րդ և 16-րդ կետեր), որոնք պարզաբանելու նպատակով անհրաժեշտ է դիմել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին, քանզի դրանք դուրս են ՀՀ վերահսկիչ պալատի իրավասությունների շրջանակներից:

7. Վերահսկողության ընթացքում արձանագրվել է զբոսաշրջային օպերատորների կողմից հյուրանոցներին և հանգստյան տների հանդեպ ունեցած դրամական պարտավորությունների մարման շարժ, որն ունի շարունակական բնույթ: 01.10.2016 թվականի դրությամբ մարված գումարի չափը կազմել է 59,319.2 հազ. դրամ:

Վերահսկողության արդյունքներով ներկայացվել են հետևյալ առաջարկությունները

Առողջապահության փաթեթի բաղադրիչի մասով

ՀՀ կառավարությանը՝

1. Կատարել համապատասխան փոփոխություններ՝ ոլորտը կարգավորող իրավական ակտերում սոցիալական փաթեթի շահառուների հերթագրումներից և մեծ հերթերի գոյացումից խուսափելու, ինչպես նաև սոցիալական փաթեթի շահառուներին հավասար պայմաններով և անհրաժեշտ ժամկետներում սպասարկելու և բուժօգնություն տրամադրելու նպատակով:

«Առողջապահության նախարարությանը»

Աշխատակազմի պետական առողջապահական գործակալության միջոցով՝

1. Ապահովել սույն հաշվետվությունում արձանագրված խախտումների վերացման, ավել փոխհատուցված գումարների նվազեցման և պետական բյուջեի համապատասխան հաշիվներին վերադարձման գործընթացը:

2. Հետևողական լինել, որպեսզի սոցիալական փաթեթի շահառուները սպասարկվեն ՀՀ առողջապահության նախարարի 2013թ. փետրվարի 6-ի թիվ 215-Ա, 2015 թվականի հունվարի 19-ի թիվ 45-Ա և 2016 թվականի հունվարի 19-ի թիվ 102-Ա հրամաններով հաստատված ծառայությունների համար սահմանված գներով և բուժօգնությունը կատարվի ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով սահմանված կարգով:

Բժշկական կազմակերպություններին՝

1. Սահմանված կարգով վարել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացիների իրազեկման թերթիկների ստացումը հաստատող համապատասխան գրանցման և հաշվառման մատյանները:

2. Հնարավորինս խուսափել հերթագրումներից՝ շահառուներին հավասար պայմաններով և անհրաժեշտ ժամկետներում սպասարկելու և բուժօգնություն տրամադրելու նպատակով:

Հանգստի ապահովման ծառայության բաղադրիչի մասով

«Հառավարությանը»

1. Սույն հաշվետվությունում արձանագրված խախտումները հետագայում բացառելու նպատակով լրամշակել սոցիալական փաթեթի ոլորտը կարգավորող իրավական ակտերը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ՀՀ Նախագահի 2016 թվականի հոկտեմբերի 10-ի ՆՀ-1091-Ն Հրամանագրով Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության համակարգում ստեղծվել է զբոսաշրջության պետական կոմիտե:

2. Մինչև լրամշակված տարբերակի ընդունումը, սոցիալական փաթեթի գումարների հնարավոր անօրինական կանխիկացումների դեպքերից խուսափելու համար սոցիալական փաթեթի գումարները տրամադրել շահառուներին՝ դրանք իրենց հայեցողությամբ տնօրինելու նպատակով:

3. Քննարկել զբոսաշրջային օպերատորների պարտադիր հաշվառման պահանջը վերացնելու և ոլորտը ազատ մրցակցային դաշտում թողնելու հարցը,

4. Քննարկել սոցիալական փաթեթի շահառուներին հյուրանոցների կամ հանգստյան տների հետ անմիջական գործարքի մեջ մտնելու հնարավորություն ընձեռելու հարցը:

«Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը»

1. Որպես լիազոր մարմին ձեռնարկել համապատասխան միջոցներ զբոսաշրջային օպերատորների կողմից հյուրանոցների և հանգստյան տների հանդեպ կուտակված պարտքերն ամբողջությամբ մարելու ուղղությամբ:
2. Հետևել զբոսաշրջային օպերատորների կողմից «Էկոնոմիկայի նախարարի 19.03.2013թ. թիվ 170-Ն հրամանի պահանջների կատարմանը»:
3. Սույն հաշվետվությունում արձանագրված խախտումները հետագայում բացառելու նպատակով «Կառավորությանը ներկայացնել սոցիալական փաթեթի ոլորտը կարգավորող իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների և լրացումների նախագծեր՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ «Նախագահի 2016 թվականի հոկտեմբերի 10-ի ՆՀ-1091-Ն Հրամանագրով Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության համակարգում ստեղծվել է զբոսաշրջության պետական կոմիտե:

Չբոսաշրջային օպերատորներին՝

1. Սոցիալական փաթեթի շահառուներին ծառայությունները մատուցել բացառապես զբոսաշրջության ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջներով:
2. Սեղմ ժամկետներում մարել հյուրանոցների և հանգստյան տների հանդեպ կուտակված պարտքը:

«ԿԱ պետական եկամուտների կոմիտեին»

1. Որոշ զբոսաշրջային օպերատորների մոտ հարկային օրենսդրության պահանջների հնարավոր խախտման դեպքերը պարզաբանելու նպատակով ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ որպես պետական լիազոր մարմին:

«Կենտրոնական բանկին»

1. Որպես բանկերի գործունեությունը վերահսկող մարմին (համաձայն «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետի) հետամուտ լինել առևտրային բանկերի կողմից սոցիալական փաթեթի շահառուների գումարները զբոսաշրջային օպերատորներին փոխանցելու գործընթացին:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան հաշվետվությունում, որին կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.12 «Ձեռնարկությունների Ինկուբատոր» հիմնադրամ

Վերահսկողությունն իրականացվել է՝ «Ձեռնարկությունների Ինկուբատոր» հիմնադրամում պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ:

Վերահսկողության օբյեկտ է հանդիսացել «Ձեռնարկությունների Ինկուբատոր» հիմնադրամը(այսուհետ՝ Հիմնադրամ):

Վերահսկողության ընթացքում կիրառվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևը: Դիտարկման ընթացքում կատարվել է ներկայացված տվյալների ուսումնասիրություն, որի արդյունքում առանձնացվել են ստուգման ուղղությունները: Կատարվել է մի շարք փաստաթղթերի և տվյալների ուսումնասիրություն ու համադրում: Վերահսկողության ընթացքում իրականացվել է Հիմնադրամի կողմից պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, ստեղծված ընկերություններում բաժնեմասի օտարման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման հետ կապված գործընթացների համադրում ոլորտը կանոնակարգող օրենսդրության հետ: Արդյունքում, ամփոփվել են դիտարկման և ստուգման ընթացքում արձանագրված փաստերը: Հիմնադրամը 2014 թվականից մինչև 2016 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել է «Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության ծրագիրը» և «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների ծրագիրը», որոնցից ուսումնասիրվել է «Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության ծրագիրը»:

Վերահսկողության արդյունքներով արված հիմնական եզրահանգումները

1. Հիմնադրամի կողմից չեն իրականացվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, սույն հաշվետվությամբ նշված օրենքների, ՀՀ կառավարության որոշումների, ինչպես նաև Հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված պահանջները, մասնավորապես՝
 - 1.1 Մշտական պահպանության ենթակա փաստաթղթերը չեն պահպանվել,
 - 1.2 Որպես էտրիդի բացառիկ իրավասություն՝ Հիմնադրամի գույքի տնօրինման կարգ չի հաստատվել,
 - 1.3 Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը հավանություն է տվել Հիմնադրամի 50% բաժնային մասնակցությամբ նոր՝ «Սորսիո» ՓԲ ընկերության ստեղծմանը և լիազորել է Հիմնադրամի տնօրենին, որպես Հիմնադրամի ներկայացուցիչ, կնքել ընկերության հիմնադիր պայմանագիր ընկերություն մյուս 50%-ի բաժնետեր Հովհաննես Ավոյանի հետ: Նշված որոշումը հակասում է «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջին, քանի որ Հովհաննես Ավոյանը հանդիսանում է հիմնադրամի մարմնի՝ հոգաբարձուների խորհրդի անդամ,

1.4 Հիմնադրամի բաժնեմասերի իրական (շուկայական) արժեքների գնահատում չի կատարվել,

1.5 Հիմնադրամի բաժնեմասերն օտարվել են առանց էտրիդի համապատասխան որոշումների:

2. «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի և «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի «Սորսիո» ՓԲ ընկերությունում ունեցած բաժնեմասերն օտարելիս ընկերությունն արդեն գործարկել էր հաջողված ծրագրային համակարգեր (առաջին դեպքում «Մոնիտորաս» և «Մոնիտիս», երկրորդ դեպքում՝ «Պիկսարտ»): 2011 թվականին «Ջի-էֆ-Այ Սոֆթվեյր» ընկերությունը 4.38 մլն ԱՄՆ դոլարով գնել է ԱՄՆ-ում գրանցված «Մոնիտիս Ինք.» և ՀՀ-ում գրանցված «Մոնիտիս Ջի-էֆ-ԱՅ» ընկերությունները ամբողջությամբ՝ սպասվելիք եկամուտը 2011 թվականի արդյունքներով գնահատելով շուրջ 70.0 մլն. ԱՄՆ դոլար: Ռիշագրավ է այն փաստը, որ «Պիկսարտ» ծրագրային լուծումը, կնքված լինելով «Սորսիո» ընկերությանը պատկանող էլեկտրոնային ստորագրությամբ, դարձել է ամերիկյան «Պիկսարտ Ինք» ընկերության սեփականություն: 2015 թվականի «Forbes»-ը «Պիկսարտը» գնահատել է 250.0 մլն ԱՄՆ դոլար:

3. 2000 թվականին ՀՀ կառավարության կողմից ՏՏ ոլորտը ճանաչվել է գերակա ճյուղ: ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից Հիմնադրամը «Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության ծրագիրը» իրականացնելու համար ստացել է պետական շնորհ՝ 241,548.5 հազ. դրամ (2014 թվականից մինչև 2016 թվականի հուլիսի 1-ն): Հիմնադրամի հիմնադրի՝ ՀՀ կառավարության կողմից ՏՏ ոլորտը զարգացնելու նպատակով Հիմնադրամի միջոցով իրականացվել են մի շարք ծրագրեր՝ «Ձեռնարկությունների ինկուբատոր» վարկային ծրագիր (շուրջ 7.6 մլն ԱՄՆ դոլար, 2001-2006 թվականներ), «Էլեկտրոնային հասարակության մրցունակության համար նորարարության վարկային ծրագիր» (շուրջ 19.5 մլն ԱՄՆ դոլար, 2010-2016 թվականներին), «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը պետական աջակցություն» ծրագիր (շուրջ 590,000.0 հազ. դրամ, 2008-2015 թվականներին), նպատակ ունենալով նաև ապահովել «Հայկական ՏՏ ապրանքային նշանի» լիարժեք մասնակցությունը միջազգային շուկաներում, ինչը նախատեսվել է ՏՏ ոլորտի զարգացման հայեցակարգով: Հայեցակարգով նպատակ է դրվել նաև, որ Հայաստանը պետք է արտապատվիրվող ցածր արժեք ունեցող ՏՏ ծառայություններ մատուցող երկրից դառնա բարձր արժեքով առաջատար ՏՏ արտադրանք և ծառայություններ տրամադրող երկիր:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ավելի արագ ու արդյունավետ զարգացմանը նպաստելու համար պետության կողմից տրամադրվել են նաև եկամտահարկի և շահութահարկի գծով հարկային արտոնություններ: Պետության ընձեռած հնարավորությունների արդյունքում, վարձակալությամբ հանձնված տարածքներից 2005 թվականի դեկտեմբերից մինչև 2015 թվականի առաջին կիսամյակի ավարտը Հիմնադրամը ստացել է շուրջ 800,0 մլն դրամ եկամուտ: Փաստացի

պետության կողմից SS ոլորտի զարգացման համար ստեղծվել են նպաստավոր պայմաններ: Վերը նշվածի հետ մեկտեղ, փաստ է, որ ակտիվների ոչ արդյունավետ կառավարման արդյունք է, որ «Սորսիո» ՓԲ ընկերությունում ունեցած 50% բաժնեմասը օտարելու արդյունքում Հիմնադրամը ստացել է ընդամենը շուրջ 3 մլն ՀՀ դրամի եկամուտ: Պետական շահի տեսանկյունից անհասկանալի և ոչ շահավետ է բաժնեմասերի վաղօրոք, առանց իրական շուկայական գնի որոշման օտարումը, քանի որ դրանց հաջողված և արժեքավոր լինելու հանգամանքը երկու դեպքում էլ պարզ էր թողարկումից կարճ ժամանակ անց:

4. Ցանկացած ստանդարտի կիրառում հաշվետվություններում առանձին գործիքների ճանաչման և դրանց արտացոլման նպատակ է հետապնդում: Վաճառքի ժամանակ հավանական արժեքի որոշումը պայմանավորված է նաև արդյունավետ կառավարման անհրաժեշտությամբ: Վերոնշյալ ընկերություններում Հիմնադրամի բաժնեմասերը վաճառվել են անվանական արժեքից 20% հավելաճով, որի հիմքում գնագոյացման որևիցե հաշվարկ-հիմնավորում չի ներկայացվել, փաստացի անտեսվել են ակտիվների իրական արժեքի գնահատման մեթոդներն ու հայեցակարգային մոտեցումները և օրենսդրության պահանջները:

5. Թվով 3 փոխառության պայմանագրերը՝ 37,000.0 հազ. դրամ ընդհանուր գումարով, ստորագրվել են Հիմնադրամի տնօրենի կողմից լիազորված անձանց միջոցով իր հետ: Փոխառության պայմանագրերի կնքման ժամանակ Հիմնադրամի անունից հանդես են եկել տնօրենի կողմից լիազորված անձինք՝ Հիմնադրամի աշխատակիցներ Ժենյա Ազիզյանը և Արթուր Մելիքյանը: «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադիրների, հիմնադրամի մարմինների անդամների և հիմնադրամի աշխատողների: Հիմնադրամի ֆինանսական միջոցները պետք է օգտագործվեն բացառապես կանոնադրական նպատակներին համապատասխան, հետևաբար փոխառությունների տրամադրումը որպես գործառույթ հակասում է ֆինանսական միջոցների նպատակային և արդյունավետ կառավարման սկզբունքին:

Փաստացի, պաշտոնատար անձի կողմից իրականացվել են գործառույթներ, որոնցում անձնական շահագրգռվածությունն ակնհայտ է:

6. Հիմնադրամի կողմից 2014 թվականի հունվարից մինչև 2015 թվականի նոյեմբեր ամիսներն ընկած ժամանակահատվածում Գյումրի քաղաքի Գայի 1 հասցեում գտնվող անշարժ գույքն, առանց իրավական հիմքերի, փաստացի օգտագործվել է, այն դեպքում, երբ Որոշման համաձայն Հիմնադրամը ստանձնել է միայն գույքի պահպանությունը:

7. ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 9-ի թիվ 13-Ն որոշմանը կից հավելվածում նշված 69,085.8 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով գույքը, ներառյալ «Սոլարթ» և «ՏեխնոՊոլ» ՓԲ ընկերություններում առկա բաժնեմասերը, չեն նվիրաբերվել Հիմնադրամին (չի կնքվել նվիրատվության պայմանագիր): Սակայն, նշված գույքից գրասենյակային կահավորանքը, համակարգչային տեխնիկան, լաբորատոր սարքավորումները, ավտոմեքենան և այլն՝ 41,113.8 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով

ապրանքները, առանց հաշվապահական հաշվառման, փաստացի գտնվում են Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի (այսուհետ՝ ԳՏԿ) տարածքում, որոնք դեռևս 2014 թվականի սկզբից, առանց իրավական հիմքի, մինչ օրս ապօրինի տիրապետվում ու շահագործվում են կենտրոնի և այնտեղ տեղակայված ընկերությունների կողմից:

8. 2014 թվականից մինչև 2016 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածի համար Հիմնադրամը պետության կողմից տրամադրվող միջոցների օգտագործման վերաբերյալ կազմված Հաշվետվություններում ներկայացրել է աշխատանքներ, որոնց գերակշիռ մասը իրականացվել և վճարվել են Վարկային ծրագրի միջոցներով: Ուշագրավ է, որ վերոնշյալ աշխատանքները, որպես ամբողջությամբ պետական միջոցների հաշվին իրականացված միջոցառումներ, Նախարարության կողմից ստացել են դրական եզրակացություններ, և արդյունքում կատարված աշխատանքների դիմաց ընդհանուր 241,548.5 հազ. դրամ գումարը փաստացի վճարվել է ՀՀ պետական բյուջեից:

9. ԳՏԿ-ում տարածքներ վարձակալած թվով 2 ընկերությունների վարձավճարի մասով պարտքը 2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմում է 684.1 հազ. դրամ գումար: Հիմնադրամի կողմից գրավոր պահանջ չի ներկայացվել վարձավճարի պարտքի, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տույժերի վճարման վերաբերյալ:

10. 2014 թվականի 2-րդ եռամսյակից մինչև 2015 թվականի նոյեմբեր ամիսը ԳՏԿ-ում թվով 21 ընկերություններ զբաղեցրել են շուրջ 2050 մ² տարածք՝ առանց ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավական հիմքերի: Հիմնադրամի կողմից վարձավճարներ հաշվարկելու դեպքում, հիմք ընդունելով կնքված պայմանագրերի ենթավարձակալության տրամադրված տարածքների մակերեսները և համապատասխան վարձավճարները, վերը նշված ժամանակահատվածի համար դրանք կկազմեն շուրջ 79,506.0 հազ. դրամ գումար:

11. 2014 թվականի 2-րդ եռամսյակից մինչև 2015 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածը ԳՏԿ-ի շենքի, այդ թվում՝ 21 ընկերությունների կողմից զբաղեցված 2050 մ² տարածքի պահպանման, մասնավորապես՝ կոմունալ վճարումների և անվտանգության համար Հիմնադրամի կողմից պետական բյուջեի միջոցներից կատարվել է շուրջ 36,000.0 հազ. դրամ գումարի անարդյունավետ ծախս:

12. ՀՀ վերահսկիչ պալատի կողմից իրականացված ստուգման ավարտից հետո, Նախարարության կողմից 2016 թվականի օգոստոսի 4-ի գրությամբ տրամադրված ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2012 թվականի հուլիսի 2-ի թիվ 541-Ա հրամանով Հիմնադրամի (2010-2012 թվականներին) ֆինանսատնտեսական գործունեության ուսումնասիրության (ստուգման) արդյունքում արձանագրվել են տարբեր բնույթի խախտումներ, որոնք վերաբերում են գնումների կազմակերպման և գույքագրման գործընթացների, կնքված աշխատանքային պայմանագրերի, պարզևատրումների, գործուղումների, ինչպես նաև տրամադրված փոխառությունների և վարձակալությամբ տրված տարածքների մասով իրականացված գործառույթներին: Նշենք, որ ուսումնասիրությամբ կազմված տեղեկանքի նախագիծը ներկայացվել է Հիմնադրամին, որի վերաբերյալ դիտողություններ կամ առարկություններ չեն ներկայացվել:

Հիմնադրամի հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան (եռամսյակային) ֆինանսական հաշվետվություններն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ժամկետներում պետական կառավարման մարմիններին ներկայացնելու, ինչպես նաև խորհրդին և այլ անձանց տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար պատասխանատվություն է կրում Հիմնադրամի տնօրենը՝ համաձայն Կանոնակարգի 8.3-րդ կետի:

Վերահսկողության արդյունքներով ներկայացվել են հետևյալ առաջարկությունները
«Հեղինակայի նախարարությանը»

1. Ձեռնարկել միջոցներ՝

1.1 ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 9-ի թիվ 13-Ն որոշմանը կից հավելվածում նշված 69,085.8 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով գույքը Հիմնադրամին նվիրաբերելու ուղղությամբ՝ բացառելով դրա ապօրինի օգտագործումը Հիմնադրամի, ինչպես նաև երրորդ անձանց կողմից,

1.2 2014 թվականի 2-րդ եռամսյակից մինչև 2015 թվականի նոյեմբեր ամիսը ընկած ժամանակահատվածը ԳՏԿ-ում Հիմնադրամի և երրորդ անձ համարվող ընկերությունների կողմից, առանց ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավական հիմքերի, զբաղեցված շուրջ 2050մ² տարածքի ապօրինի տիրապետման/օգտագործման դիմաց եկամուտները հատուցելու ուղղությամբ, որոնք կարող էին ստացվել Հիմնադրամի կողմից շուրջ 79,506.0 հազ. դրամի վարձավճարները հաշվարկվելու դեպքում,

1.3 Նշված ժամանակահատվածում իրավասու պետական գերատեսչությունների կողմից ՀՀ օրենսդրությամբ առաջացող հարկերի և այլ վճարների հաշվարկման և դրանք ՀՀ պետական բյուջե գանձման ուղղությամբ:

2. Ապահովել «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված բյուջետային միջոցների ծախսերի հասցեագրվածությունն ու նպատակայնությունը, այն է՝ դրանց հատկացումը կոնկրետ հասցեատերերին և ֆինանսավորման հստակ նպատակների նշվածությամբ:

3. Պարզել 2014 թվականից մինչև 2016 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածի համար դրամաշնորհային պայմանագրերով պետության կողմից Հիմնադրամին փաստացի վճարված ընդհանուր 241,548.5 հազ. դրամ գումարի հիմնավորվածությունը և արդյունքում կրկնակի վճարված գումարները հետ գանձել ՀՀ պետական բյուջե:

4. Հաշվի առնելով վերոգրյալը՝ այսուհետ պատշաճ վերահսկողություն իրականացնել ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ, վերլուծության ենթարկել Հիմնադրամի կողմից ներկայացվող հաշվետվությունները, մշակել միջոցառումներ կառավարման մեխանիզմների կատարելագործման, Հիմնադրամի սեփականության արդյունավետ կառավարման ուղղությամբ:

5. Ուժեղացնել ներքին հսկողական համակարգը, բարելավել ռիսկերի կառավարման գործընթացը և ապահովել վերահսկողական գործառույթների արդյունավետ իրականացումը, ներքին աուդիտի ռազմավարական ու տարեկան ծրագրերում ներառել Հիմնադրամի ընթացիկ գործունեությանը և տարեկան հաշվետվությունների արժանահավատությանը վերաբերող թեմաներ:

6. Ուսումնասիրել «Սորսիո» ՓԲ ընկերությունում «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից բաժնեմասի օտարման գործընթացի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին՝

1. Հանդիսանալով կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմին, անհրաժեշտ է հաստատել Հիմնադրամի գույքի տնօրինման կարգ, ապահովել ֆինանսատնտեսական գործունեության լիարժեք վերահսկումը, այդ թվում՝ տարեկան բյուջեների կազմման և կատարման նկատմամբ:

2. Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետությունը և նպատակայնությունն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված, հարկավոր է.

2.1 Հիմնադրամի ռազմավարական և դրանց հիմքով կազմված տարեկան ծրագրերը մշակել «ՀՀ ինֆորմացիոն տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետության զարգացման հայեցակարգով» սահմանված դրույթներին համապատասխան,

2.2 Պետության ընձեռած հնարավորությունների արդյունքում ձևավորվող և Հիմնադրամի կողմից տնօրինվող եկամուտներն ուղղել բացառապես կանոնադրական նպատակների իրականացմանը,

2.3 Ձեռնարկել միջոցներ ԳՏԿ-ում տարածքներ վարձակալած թվով 2 ընկերությունների վարձավճարի մասով պարտքի՝ 684.1 հազ. դրամ գումարի, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տույժերի հաշվարկման և գանձման ուղղությամբ:

3. Ուժեղացնել հսկողությունը Հիմնադրամի գործունեության նկատմամբ, ձեռնարկել միջոցներ, որոնք ուղղված կլինեն ինչպես արձանագրված խախտումների վերացմանը, այնպես էլ աշխատանքների հետագա կազմակերպման արդյունավետության բարձրացմանը:

4. Օրենսդրական խախտումները բացառելու նպատակով քննարկել չիրականացված գործառույթների համար պատասխանատու համապատասխան պաշտոնատար անձանց՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու հարցը:

Հիմնադրամի տնօրենին՝

Հիմնադրամի ընթացիկ կառավարման գործառույթն իրականացնելիս անհրաժեշտ է խստորեն ղեկավարվել ՀՀ օրենսդրության, Հիմնադրամի Կանոնադրության և իրավական ակտերի դրույթներով:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան հաշվետվությունում, որին կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.13 ՀՀ սփյուռքի նախարարություն

Վերահսկողությունն իրականացվել է ՀՀ սփյուռքի նախարարության կողմից պետական բյուջեի ծրագրերով հատկացված միջոցների օգտագործման նկատմամբ:

Վերահսկողության օբյեկտ են հանդիսացել ՀՀ սփյուռքի նախարարությունը և «Հայրենիք սփյուռք կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ՊՈԱԿ):

Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևով: Վերահսկողության ընթացքում կիրառվել են համապատասխանության, ֆինանսական և արդյունավետության (կատարողական) վերահսկողության տեսակները: Վերահսկողության ընթացքում, կիրառելով տարբեր տվյալների համադրման մեթոդներ, կատարվել է փաստաթղթերի ուսումնասիրություն: Վերլուծության փուլում ամփոփվել են օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և համապատասխանությունը, դիտարկման և ստուգման ընթացքում արձանագրված փաստերը:

Վերահսկողության արդյունքներով արված հիմնական եզրահանգումները

1. 2015 թվականին «Այլ վարձատրություններ» հոդվածի միջոցների հաշվին 3,958.3 հազ. դրամով պարզևատրվել են Նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողները, որոնց պարզևատրումը «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն կարող էր կատարվել միայն «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցների հաշվին:
2. Ուսումնական գրականությունը պահեստավորելու համար Նախարարության և «Զանգակ-97» ՍՊԸ միջև 1,500.0 հազ. դրամ արժեքով պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 17-րդ և 20-րդ հոդվածների պահանջների խախտումով՝ վարձատրում ընտրվել է առանց մրցույթ անցկացնելու՝ բանակցային ընթացակարգով առանց հայտարարություն հրապարակելու գնման ձևով:
3. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրով Նախարարությանը պետական բյուջեից յուրաքանչյուր տարի հատկացվել է 14,400.0 հազ. դրամ: 2015 թվականին Նախարարությունը կնքել է պայմանագրեր՝ 12 գիտական հետազոտություն կատարելու համար, յուրաքանչյուրը՝ 1,200.0 հազ դրամ արժեքով: Նախարարության կողմից մշակված չէ ընթացակարգ՝ պատվիրվող հետազոտությունների գնահատման չափորոշիչները որոշելու համար, ու արդյունքում տարբեր բարդության և ծավալի հետազոտությունների համար պայմանագրերով սահմանվել և վճարվել է միևնույն չափի գումար:

4. 2015 թվականին Նախարարության կողմից հրատարակված 2100 հատ «Հայկական սփյուռք 2014» տարեգրքերից ստուգման պահի դրությամբ պահեստում մնացորդը կազմել է 1075 հատ, նախորդ տարվա «Հայկական սփյուռք 2013» տարեգրքերի մնացորդը՝ 630 հատ, կամ յուրաքանչյուր տարի առաջանում է տարեգրքերի չբաշխված մեծ քանակի և արժեքի մնացորդ:

5. Սիրիահայ ուսանողներին կրթաթոշակներ հատկացնելու նպատակով ՀՀ կառավարության 22.10.2015թ. թիվ 1244-Ն որոշմամբ պահուստային ֆոնդից հատկացված 24,656.0 հազ. դրամը Նախարարությունը նվիրաբերել է «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպությանը: Ստուգման ընթացքում հատկացված գումարի 3,131.0 հազ. դրամ մնացորդը կազմակերպությունը վերադարձրել է պետական բյուջե:

6. Նախարարությունը ՊՈԱԿ-ին՝ «Հայերն այսօր» էլեկտրոնային օրաթերթի և էլեկտրոնային գրադարանի պահպանման ծախսերի համար հատկացրել է յուրաքանչյուր տարի 30,036.4 հազ. դրամ: Ստուգմամբ պարզվել է, որ ՊՈԱԿ-ի կողմից 2015 թվականին տարածքի վարձակալության և տեխսպասարկման համար վճարվել է 1,805.8 հազ. դրամ: 2016 թվականից էլեկտրոնային օրաթերթի և գրադարանի աշխատողները տեղակայվել են Նախարարության մասնաշենքի տարածքում և նշված ծախսի անհրաժեշտությունը վերացել է: Հետևաբար, Նախարարության և ՊՈԱԿ-ի միջև 2016 թվականին կնքված պայմանագրի արժեքն անհրաժեշտ է վերանայել և 1,805.8 հազ. դրամ վերադարձնել պետական բյուջե:

Վերահսկողության արդյունքներով ներկայացվել են հետևյալ առաջարկությունները

«ՀՀ սփյուռքի նախարարությանը»

1. Պետական բյուջեից հատկացված միջոցների արդյունավետ օգտագործումը ապահովելու նպատակով կրճատել «Հայկական սփյուռք» տարեգրքի տպագրվող խմբաքանակը և սահմանել չափորոշիչներ՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար ու կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների արժեքները որոշելու համար:

2. Ապահովել վերադարձման ենթակա գումարի մուտքը պետական բյուջե:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան հաշվետվությունում, որին կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.14 ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնք

Վերահսկողությունն իրականացվել է ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի կողմից բյուջետային միջոցների օգտագործման, բյուջեի մուտքերի ապահովման, ինչպես նաև համայնքային սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ:

Վերահսկողության օբյեկտ են հանդիսացել ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքը, ներառյալ ենթակա հիմնարկները, համայնքային ենթակայությամբ գործող համայնքային

ոչ առևտրային կազմակերպությունները և կանոնադրական կապիտալում 50 և ավելի տոկոս համայնքային մասնակցությամբ իրավաբանական անձինք:

Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևերով: Վերահսկողության ընթացքում կիրառվել են համապատասխանության, ֆինանսական և արդյունավետության (կատարողական) վերահսկողության տեսակները: Վերահսկողության ընթացքում կատարվել է տարբեր տվյալների համադրում և փաստաթղթերի ուսումնասիրություն:

Ստուգմամբ ընտրանքային կարգով ընդգրկվել են հետևյալ եկամտատեսակները և ծախսային հոդվածները՝

- Հողի հարկ
- Գույքահարկ
- Տեղական տուրքեր և վճարներ
- Հողի և գույքի վարձավճարներ
- Աղբահանության ծառայություններ
- Սանիտարական մաքրման ծառայություններ
- Համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններ:

Վերահսկողության արդյունքներով արված հիմնական եզրահանգումները

1. Հողի հարկի չվճարած ապառքները և տույժերը միասին վերցրած 2016 թվականի ապրիլի 1-ի դրությամբ կազմել են 93,697.7 հազ. դրամ, որից 56,086.6 հազ. դրամը ֆիզիկական անձանց, իսկ 37,611.1 հազ. դրամը իրավաբանական անձանց մասով է:
2. Գույքահարկի չվճարած ապառքները և տույժերը միասին վերցրած 2016 թվականի ապրիլի 1-ի դրությամբ կազմել են 372,944.8 հազ. դրամ, որից 266,648.7 հազ. դրամը ֆիզիկական անձանց, իսկ 106,260.1 հազ. դրամը՝ իրավաբանական անձանց մասով:
3. Համայնքի տարածքում գործող 10 հասարակական նշանակության օբյեկտների գբաղեցրած բնակելի նշանակության շենք շինությունների գործառնական նշանակությունը չի փոխված, իսկ թվով 14 սեփականատերերին պատկանող նորակառույց շենք շինություններ ստանալով քաղաքապետարանից շին. թույլտվություն, սահմանված ժամկետում չավարտելով շինության կառուցումը, չեն կատարել գույքի պետական գրանցում և չեն դարձել համայնքի համար եկամտի աղբյուր, որի արդյունքում համայնքի բյուջեն զրկվել է լրացուցիչ եկամուտից՝ գույքահարկից:
4. Համայնքում հաշվառումից դուրս մնացած և առանց թույլտվության աշխատող տեղական տուրք վճարողների և արտաքին գովազդի 1,376.8ք.մ. վահանակների գովազդատուների կողմից համայնքի բյուջե չվճարված տեղական տուրքի գումարը կազմել է 16,135.2 հազ. դրամ, այդ թվում 2015 թվականին՝ 1,116.0 հազ. դրամ, 2016 թվականին՝ 15,019.2 հազ. դրամ: Ստուգման ընթացքում համայնքի բյուջե որպես տեղական տուրք վճարվեց 3,348.0 հազ. դրամ:
5. 2016 թվականի մարտի 30-ի դրությամբ հողի վարձավճարների գծով ապառքը կազմել է 39,448.3 հազ. դրամ և տույժը՝ 8,486.7 հազ. դրամ, ընդամենը ապառքը տույժերի հետ միասին կազմել է 47,860.0 հազ. դրամ:

6. 2016 թվականի մարտի 30-ի դրությամբ գույքի վարձավճարների գծով ապառքը կազմել է 5,828.2 հազ. դրամ և տույժը՝ 1,178.8 հազ. դրամ, ընդամենը ապառքը տույժերի հետ միասին կազմել է 7,007.0 հազ. դրամ:

7. Խախտվել է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, այն է. «Աղբահանության վճարի վճարումը սույն օրենքով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար աղբահանության վճար վճարողը, իսկ սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում աղբահանության վճար հաշվարկողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0.15 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 180 օրվա համար»: Քաղաքապետարանում առկա համակարգչային ծրագիրը հնարավորություն չի տալիս աղբահանության վճարների ժամկետից ուշացնելու դեպքում տույժերի հաշվարկ կատարել: 2015 թվականի ընթացքում աղբահանության վճարների գծով գոյացել են նոր ապառքներ, գումարով 39,207.7 հազ. դրամ, որն ենթակա է գանձման համայնքի բյուջե:

8. Վանաձոր քաղաքային համայնքի ավագանու որոշումով նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում /այսուհետ՝ ՆՈՒՀ/ ծնողական վարձավճարը տատանվում է 3000-6000 դրամ, այդ դեպքում, երբ իրար հարևանությամբ գործող երկու ՆՈՒՀ-երում ամսական վարձավճարի տարբերությունը մեկ երեխայի մասով կազմում է 500-ից 3000 դրամ/համապատասխանաբար տարբերությամբ էլ գնվում է սնունդը/:

9. Թվով 11 ՆՈՒՀ-երում առկա է փոխտնօրենի հաստիք, ինչը հակասում է ՀՀ կրթության և գիտության նախարարի «ՀՀ պետական և համայնքային ՆՈՒՀ-երի օրինակելի հաստիքացուցակի, խմբերի խտության և նորմատիվները» հաստատելու մասին 26.01.2007թ. թիվ 29-Ն հրամանին:

10. ՆՈՒՀ ղեկավարությունը մրցույթների մասնակիցների գնային առաջարկների նկատմամբ միասնականություն ցուցաբերելու դեպքում կարող էին տնտեսել միջոցները:

Վերահսկողության արդյունքներով ներկայացվել են հետևյալ առաջարկությունները

Վանաձորի քաղաքապետարանին՝

1. Ձեռնարկել միջոցառումներ համայնքի բյուջեի հարկային եկամուտների լիարժեք պլանավորման և համայնքի հողի հարկով և գույքահարկով հարկվող կազմակերպությունների և ֆիզիկական անձանց ապառքների գանձման ուղղությամբ:

2. Աշխատանքներ տանել սեղմ ժամկետում համայնքի տարածքում գործող հասարակական նշանակության օբյեկտների զբաղեցրած բնակելի նշանակության շենք շինությունների գործառնական նշանակությունը փոխելու ուղղությամբ:

3. Ձեռնարկել միջոցառումներ՝ ՀՀ կառավարության 29.05.2003թ. թիվ 680 որոշմամբ սահմանված, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներին ներկայացվեն ՀՀ օրենսդրության համապատասխան նոր կառուցված, նոր առաջացած (ավարտվածության աստիճանի, հարկայնության, նպատակային և գործառնական նշանակության փոփոխություններ ունեցող) շենքերի, շինությունների ընթացիկ հաշվառման մասին տեղեկատվություն:

4. Տեղական տուրքերի և վճարների հաշվարկն ու գանձումը իրականացնել նախքան այդ լիազորությունների կամ գործողությունների իրականացումը, ելնելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույքաչափերից: Համապատասխան գործող օրենքների, համայնքի բյուջեում նախատեսել տեղական տուրքերից և վճարներից իրատեսական մուտքեր և ապահովել դրանց գանձումը:

5. Աղբահանության վարձավճարների գանձումները իրականացնել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն:

6. Ձեռնարկել միջոցառումներ՝ աղբահանության վարձավճարների գծով 2015 թվականի ընթացքում գոյացած ապառքները համայնքի բյուջե գանձելու ուղղությամբ:

7. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում հաստիքային միավորները համապատասխանեցնել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 26-ի թիվ 29-Ն հրամանին:

8. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում սահմանել միևնույն ծնողական վարձավճարներ, իսկ ամենօրյա օգտագործման սննդամթերքի գնումը կազմակերպել կենտրոնացված կարգով՝ միասնական մրցույթով:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան հաշվետվությունում, որին կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.15 ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնք

Վերահսկողությունն իրականացվել է ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի կողմից բյուջետային միջոցների օգտագործման, բյուջեի մուտքերի ապահովման, ինչպես նաև համայնքային սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ:

Վերահսկողության օբյեկտ են հանդիսացել ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքը, ներառյալ ենթակա հիմնարկները, համայնքային ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները և կանոնադրական կապիտալում 50 և ավելի տոկոս համայնքային մասնակցությամբ իրավաբանական անձինք:

Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևերով: Վերահսկողության ընթացքում կիրառվել են համապատասխանության, ֆինանսական և արդյունավետության (կատարողական) վերահսկողության տեսակները:

Ընտրանքային կարգով ընդգրկվել են հետևյալ հարցերի ստուգումը.

1. Եկամուտների գծով՝
 - Հողի հարկ
 - Գույքահարկ
 - Տեղական տուրքեր և վճարներ
 - Հողի և գույքի վարձավճարներ
 - Հողի օտարում

- Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վարձակալության վարձավճարներ:
- 2. Ծախսերի գծով՝
 - Կենցաղային և հանրային սննդի նյութեր (Համայնքի մանկապարտեզների սաներին լրացուցիչ սննդով ապահովում և համայնքի հոյներին սննդի տրամադրում)
 - Մասնագիտական ծառայություններ (Համայնքի կանանց կրծքագեղձի մամոգրաֆիկ և տղամարդկանց շականակագեղձի սոնոգրաֆիկ հետազոտություններ)
 - Այլ նպաստներ բյուջեից (Համայնքի երեխաներին ամառային ճամբարների և համայնքի բնակիչներին առողջարանների ուղեգրերի տրամադրում):

Վերահսկողության արդյունքներով արված հիմնական եզրահանգումները

1. Համայնքի առանձին հողօգտագործողների կողմից 2016 թվականի մայիսի 17-ի դրությամբ հողի վարձավճարների գծով ապառքը տույժերի հետ միասին կազմում է 1,532.5 հազ.դրամ:
2. Խախտելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջները համայնքում չի գանձվել 906.5 հազ. դրամ տեղական տուրք:
3. Գույքահարկի և հողի հարկի վճարումները 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ չնայած գերակատարվել են, սակայն 2015 թվականի գործունեությունից առաջացել են նոր ապառքներ ընդամենը 2,484.3 հազ.դրամի, նույն թվում հողի հարկի գծով 1,115.5 հազ.դրամի, իսկ գույքահարկի գծով 1,368.8 հազ.դրամի:
4. Համայնքում 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ֆիզիկական և իրավաբանական անձանց աղբահանության չհավաքագրված գումարը կազմում է 2,302.4 հազ. դրամ, որից 260.9 հազ. դրամը գոյացել է 2015 թվականի գործունեության ընթացքում:
5. Գույքի վարձակալության վճարները 2016 թվականի մայիսի 18-ի դրությամբ /ստուգման օրվա դրությամբ/ համայնքի բյուջե պակաս է վճարվել 644.5 հազ.դրամ:
6. Համայնքի գրադարաններում չեն իրականացվել գրքային ֆոնդի գույքագրումներ: Խախտվել է ՀՀ ֆինանսների նախարարի 2000թ. թիվ 102 հրամանի և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջները:
7. Հ. Թումանյանի անվան գրադարանը տեղակայված է մշակույթի կենտրոնի 1-ին հարկում և զբաղեցնում է 120 քմ. մակերես, որը չի բավարարում ՀՀ կառավարության 13.12.2002թ. թիվ 1490-Ն որոշումով սահմանված նորմերին:

Վերահսկողության արդյունքներով ներկայացվել են հետևյալ առաջարկությունները

Այլվերդու քաղաքապետարանին՝

1. Գործող օրենքին համապատասխան միջոցներ ձեռնարկել տեղական տուրքերը ժամանակին գանձելու և համայնքի բյուջե մուտքագրելու ուղղությամբ:
2. Հողի և գույքի վարձակալության վարձավճարների ապառքները, ինչպես նաև պայմանագրերով սահմանված տույժերը գանձել համայնքի բյուջե:

3. Գործող օրենքին համապատասխան միջոցներ ձեռնարկել հողի և գույքի հարկերի ապառքները համայնքի բյուջե մուտքագրելու ուղղությամբ:

4. Աղբահանության վարձավճարների գանձումների նկատմամբ իրականացնել պատշաճ հսկողություն՝ գանձումներն իրականացնելով ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան հաշվետվությունում, որին կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.16 ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնք

Վերահսկողությունն իրականացվել է ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի կողմից բյուջետային միջոցների օգտագործման, բյուջեի մուտքերի ապահովման, ինչպես նաև համայնքային սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ:

Վերահսկողության օբյեկտ են հանդիսացել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքը, ներառյալ ենթակա հիմնարկները, համայնքային ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները և կանոնադրական կապիտալում 50 և ավելի տոկոս համայնքային մասնակցությամբ իրավաբանական անձինք:

Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևերով: Վերահսկողության ընթացքում կիրառվել են համապատասխանության, ֆինանսական և արդյունավետության (կատարողական) վերահսկողության տեսակները:

Ստուգմամբ ընտրանքային կարգով ընդգրկվել են հետևյալ եկամտատեսակները և ծախսային հոդվածները՝

- Հողի հարկ
- Գույքահարկ
- Տեղական տուրքեր և վճարներ
- Հողի և գույքի վարձավճարներ
- Կոմունալ ծառայություններ:

Վերահսկողության արդյունքներով արված հիմնական եզրահանգումները

1. Համայնքի հողօգտագործողների կողմից 2016 թվականի մարտի 30-ի դրությամբ հողի վարձավճարների գծով ապառքը կազմում է 512.1 հազ. դրամ, իսկ տույժը՝ 108.8 հազ. դրամ, ընդամենը 621.0 հազ. դրամ և ենթակա է վճարման համայնքի բյուջե:

2. Խախտելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջները համայնքում չի գանձվել 928.5 հազ. դրամ տեղական տուրք:

3. Չնայած 2015 թվականին գործունեությունից գույքահարկի և հողի հարկի մասով նոր ապառքներ չեն առաջացել, սակայն առկա են նախորդ տարիների 12,776.6 հազ. դրամ հողի հարկի և 11,065.4 հազ. դրամ գույքահարկի ապառք:

4. Համայնքում ավագանու որոշմամբ հաստատված դրույքաչափերի համաձայն աղբահանության վարձավճարները 2015 թվականի համար պակաս են հավաքագրվել համայնքային բյուջե 1,002.1 հազ. դրամի չափով:

Վերահսկողության արդյունքներով ներկայացվել են հետևյալ առաջարկությունները

Ստեփանավանի քաղաքապետարանին՝

1. «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան միջոցներ ձեռնարկել տեղական տուրքերը ժամանակին գանձելու և համայնքի բյուջե մուտքագրելու ուղղությամբ:
2. Աղբահանության վարձավճարների գանձումների նկատմամբ իրականացնել պատշաճ հսկողություն՝ գանձումներն իրականացնելով ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:
3. Հողի վարձակալության վարձավճարների ապառքները, ինչպես նաև պայմանագրերով սահմանված տույժերը գանձել համայնքի բյուջե:
4. Գործող օրենքին համապատասխան միջոցներ ձեռնարկել հողի հարկի և գույքահարկի ապառքները համայնքի բյուջե մուտքագրելու ուղղությամբ:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան հաշվետվությունում, որին կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.17 ՀՀ Լոռու մարզի Սպիտակի համայնք

Վերահսկողությունն իրականացվել է ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի կողմից բյուջետային միջոցների օգտագործման, բյուջեի մուտքերի ապահովման, ինչպես նաև համայնքային սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ:

Վերահսկողության օբյեկտ են հանդիսացել ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքը, ներառյալ ենթակա հիմնարկները, համայնքային ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները և կանոնադրական կապիտալում 50 և ավելի տոկոս համայնքային մասնակցությամբ իրավաբանական անձինք:

Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևերով: Վերահսկողության ընթացքում կիրառվել են համապատասխանության, ֆինանսական և արդյունավետության (կատարողական) վերահսկողության տեսակները:

Ստուգմամբ ընտրանքային կարգով ընդգրկվել են հետևյալ եկամտատեսակները և ծախսային հոդվածները՝

- Հողի հարկ
- Գույքահարկ
- Տեղական տուրքեր և վճարներ
- Հողի և գույքի վարձավճարներ

- Աղբահանության ծառայություններ
- Սանիտարական մաքրման ծառայություններ
- Համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններ:

Վերահսկողության արդյունքներով արված հիմնական եզրահանգումները

1. 2015 թվականի ընթացքում հողի հարկի չվճարված ապառքները և տույժերը միասին կազմել են 2,900.7 հազ. դրամ, որից 2,017.9 հազ. դրամը ֆիզիկական անձանց, իսկ 882.8 հազ. դրամը իրավաբանական անձանց մասով է:
2. 2015 թվականի ընթացքում գույքահարկի չվճարած ապառքները և տույժերը միասին կազմել են 10,631.2 հազ. դրամ, որից 8,862.3 հազ. դրամը ֆիզիկական անձանց, իսկ 1,768.9 հազ. դրամը՝ իրավաբանական անձանց մասով:
3. Համայնքի տարածքում գործող 5 հասարակական նշանակության օբյեկտների զբաղեցրած բնակելի նշանակության շենք շինությունների գործառնական նշանակությունը չի փոխված, իսկ 6 սեփականատերերի պատկանող նորակառույց շենք շինություններ ստանալով քաղաքապետարանից շին. թույլտվություն, սահմանված ժամկետում չավարտելով շինության կառուցումը, չեն կատարել գույքի պետական գրանցում:
4. Համայնքում հաշվառումից դուրս մնացած և առանց թույլտվության աշխատող տեղական տուրք վճարողների և արտաքին գովազդի 270 ք.մ. վահանակների գովազդատուների կողմից համայնքի բյուջե չվճարված տեղական տուրքի գումարը կազմել է 3,500.0 հազ. դրամ, որից ստուգման ընթացքում համայնքի բյուջե վճարվեց 532.1 հազ. դրամ:
5. 2016 թվականի ապրիլի 1-ի դրությամբ հողի վարձավճարների գծով ապառքը կազմել է 2,978.2 հազ. դրամ և տույժը՝ 280.3 հազ. դրամ, ընդամենը ապառքը տույժերի հետ միասին կազմել է 3,258.5 հազ. դրամ:
6. 2016 թվականի ապրիլի 1-ի դրությամբ գույքի վարձավճարների գծով ապառքը կազմել է 480.0 հազ. դրամ:
7. Իսախտվել է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, այն է. «Աղբահանության վճարի վճարումը սույն օրենքով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար աղբահանության վճար վճարողը, իսկ սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում աղբահանության վճար հաշվարկողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0.15 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 180 օրվա համար»: Քաղաքապետարանում առկա համակարգչային ծրագիրը հնարավորություն չի տալիս աղբահանության վճարների ժամկետից ուշացնելու դեպքում տույժերի հաշվարկ կատարել: 2015 թվականի ընթացքում աղբահանության վճարների գծով գոյացել են նոր ապառքներ, գումարով 4,852.7 հազ. դրամ, որն ենթակա է գանձման համայնքի բյուջե:
8. «Նարինե» ՍՊԸ-ի կողմից աղբը տեղադրվում է համայնքի սեփականություն հանդիսացող 3,99 հա մակերեսով աղբավայրում: Տարածքի շահագործումը չի համապատասխանում սահմանված պահանջներին. աղբավայրը ցանկապատված չէ, տարածքում գոյություն չունի մուտքի վերահսկողություն:

9. Թիվ 2 ՆՈՒՀ-ում առկա են ավելի պահված հաստիքներ հաստատված դրույքաչափերով՝ մանկավարժ խմբավարի 1 հաստիք, խոհարարի 1 հաստիք, հավաքարարի 0,5 դրույք, սոցիոլոգ մանկավարժի 0,5 դրույք, որը հակասում է ՀՀ կրթության և գիտության նախարարի «ՀՀ պետական և համայնքային ՆՈՒՀ-երի օրինակելի հաստիքացուցակի, խմբերի խտության և նորմատիվները» հաստատելու մասին 26.01.2007թ. թիվ 29-Ն հրամանին: ՆՈՒՀ-երում խմբերի խտությունը չի համապատասխանում նույն հրամանի պահանջներին:

10. ՆՈՒՀ ղեկավարությունը մրցույթների մասնակիցների գնային առաջարկների նկատմամբ միասնականություն ցուցաբերելու դեպքում կարող էին տնտեսել միջոցները:

Վերահսկողության արդյունքներով ներկայացվել են հետևյալ առաջարկությունները

Սպիտակի քաղաքապետարանին՝

1. Ձեռնարկել միջոցառումներ համայնքի բյուջեի հարկային եկամուտների լիարժեք պլանավորման և համայնքի հողի հարկով և գույքահարկով հարկվող կազմակերպությունների և ֆիզիկական անձանց ապառքների գանձման ուղղությամբ:

2. Աշխատանքներ տանել համայնքի տարածքում գործող հասարակական նշանակության օբյեկտների զբաղեցրած բնակելի նշանակության շենք շինությունների գործառնական նշանակությունը փոխելու ուղղությամբ:

3. Ձեռնարկել միջոցառումներ՝ ՀՀ կառավարության 29.05.2003թ. թիվ 680 որոշմամբ սահմանված, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներին ներկայացնել ՀՀ օրենսդրության համապատասխան նոր կառուցված, նոր առաջացած (ավարտվածության աստիճանի, հարկայնության, նպատակային և գործառնական նշանակության փոփոխություններ ունեցող) շենքերի, շինությունների ընթացիկ հաշվառման մասին տեղեկատվություն:

4. Տեղական տուրքերի և վճարների հաշվարկն ու գանձումը իրականացնել նախքան այդ լիազորությունների կամ գործողությունների իրականացումը, ելնելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույքաչափերից: Համապատասխան գործող օրենքների, համայնքի բյուջեում նախատեսել տեղական տուրքերից և վճարներից իրատեսական մուտքեր և ապահովել դրանց գանձումը:

5. Աղբահանության վարձավճարների գանձումներն իրականացնել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն:

6. Ձեռնարկել միջոցառումներ՝ աղբահանության վարձաճրների գծով 2015թ-ի ընթացքում գոյացած ապառքները համայնքի բյուջե գանձելու ուղղությամբ:

7. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում հաստիքային միավորները և խմբերի խտությունը համապատասխանեցնել ՀՀ կրթության և գիտության նախարարի 26.01.2007թ. թիվ 29-Ն հրամանի պահանջներին:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի

համապատասխան հաշվետվությունում, որին կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

2.18 ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնք

Վերահսկողությունն իրականացվել է ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի կողմից բյուջետային միջոցների օգտագործման, բյուջեի մուտքերի ապահովման, ինչպես նաև համայնքային սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ:

Վերահսկողության օբյեկտ են հանդիսացել ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքը, ներառյալ ենթակա հիմնարկները, համայնքային ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները և կանոնադրական կապիտալում 50 և ավելի տոկոս համայնքային մասնակցությամբ իրավաբանական անձինք:

Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևերով: Վերահսկողության ընթացքում կիրառվել են համապատասխանության, ֆինանսական և արդյունավետության (կատարողական) վերահսկողության տեսակները: Վերահսկողության ընթացքում կատարվել է տարբեր տվյալների համադրում և փաստաթղթերի ուսումնասիրություն:

Ստուգմամբ ընտրանքային կարգով ընդգրկվել են հետևյալ եկամտատեսակները և ծախսային հոդվածները՝

- Հողի հարկ
- Գույքահարկ
- Տեղական տուրքեր և վճարներ
- Կոմունալ ծառայություններ
- Աղբահանության վճարներ
- Համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններ:

Վերահսկողության արդյունքներով արված հիմնական եզրահանգումները

1. 2015 թվականի բյուջեի հողի հարկի նախատեսված ցուցանիշը /2,300.0 հազ. դրամ/ ավելի ցածր է քան հողի հարկի տարեկան հաշվարկային ցուցանիշը /3,762.3 հազ. դրամ/, նախորդ տարվա ապառքներից բյուջեում գումարներ չի նախատեսվել: Չնայած այդ պլանավորմանը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ հողի հարկի ապառքը և հաշվարկված տույժերը կազմում են 28,860.8 հազ. դրամ:
2. 2015 թվականի բյուջեի գույքահարկի նախատեսված ցուցանիշը /41,450.0 հազ. դրամ/ ավելի ցածր է քան գույքահարկի տարեկան հաշվարկային ցուցանիշը /64,134.9 հազ. դրամ/, նախորդ տարվա ապառքներից բյուջեում գումարներ չի նախատեսվել: Չնայած այդ պլանավորմանը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ գույքահարկի ապառքը և հաշվարկված տույժերը կազմում են 202,698.8 հազ. դրամ:
3. Համայնքում գտնվող թվով 16 սեփականատերերի պատկանող նորակառույց շենք շինություններ ստանալով քաղաքապետարանից շին.թույլտվություն, սահմանված ժամկետում չավարտելով շինության կառուցումը /ունենալով տարբեր ավարտվածության

աստիճան/, չեն կատարել գույքի պետական գրանցում և չեն դարձել համայնքի համար եկամտի աղբյուր:

4. Համայնքում հաշվառումից դուրս մնացած և առանց թույլտվության աշխատող տեղական տուրք վճարողների և արտաքին գովազդի 299ք.մ. վահանակների գովազդատուների կողմից համայնքի բյուջե չվճարված տեղական տուրքի գումարը կազմել է 3,305.9 հազ. դրամ:

5. Համայնքի փողոցների սանիտարական մաքրման, կենցաղային աղբահանության, կանաչապատման և գերեզմանոցների և այլ անձնակազմի պահպանման աշխատանքները կատարվել են «Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն» հիմնարկի կողմից: Անտեսելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի, ինչպես նաև «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջները, քաղաքապետի կողմից կազմված և համայնքի ավագանու կողմից հաստատված սանիտարական մաքրման սխեմաներ չկան: Աղբահանության վճարների 2015 թվականին չվճարված գումարը կազմել է 11,936.4 հազ. դրամ, իսկ 2016 թվականին՝ 2,833.4 հազ. դրամ:

6. Քաղաքապետարանի շենքում, առանց համապատասխան պայմանագրերի տեղակայված են նոտարական գրասենյակը /2 սենյակ/ և համատիրությունը /1 սենյակ/:

7. Թվով 3 ՆՈՒՀ-երում առկա է 17,25 դրույք հաստիք, որը հակասում է ՀՀ կրթության և գիտության նախարարի «ՀՀ պետական և համայնքային ՆՈՒՀ-երի օրինակելի հաստիքացուցակի, խմբերի խտության և նորմատիվները» հաստատելու մասին 26.01.2007թ. թիվ 29-Ն հրամանին: ՆՈՒՀ-երում խմբերի խտությունը չի համապատասխանում նույն հրամանի պահանջներին:

8. Խախտելով ՀՀ կառավարության 2013թ. 168-Ն որոշման 95-րդ կետի պահանջը՝ մանկապարտեզները գնված սննդամթերքը ընդունել են առանց հանձման-ընդունման արձանագրության, ինչը անհնար է դարձնում ստուգել մատակարարված ապրանքների քանակն ու ժամկետները:

Վերահսկողության արդյունքներով ներկայացվել են հետևյալ առաջարկությունները

Իջևանի քաղաքապետարանին՝

1. Ձեռնարկել միջոցառումներ՝ համայնքի բյուջեի հողի հարկի և գույքահարկի լիարժեք պլանավորման և համայնքի հողի հարկով և գույքահարկով հարկվող կազմակերպությունների և ֆիզիկական անձանց ապառքների գանձման ուղղությամբ:

2. Ձեռնարկել միջոցառումներ՝ ՀՀ կառավարության 29.05.2003թ. թիվ 680 որոշմամբ սահմանված, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներին ներկայացնել ՀՀ օրենսդրության համապատասխան նոր կառուցված, նոր առաջացած (ավարտվածության աստիճանի, հարկայնության, նպատակային և գործառնական նշանակության փոփոխություններ ունեցող) շենքերի, շինությունների ընթացիկ հաշվառման մասին տեղեկատվություն:

3. Տեղական տուրքերի և վճարների հաշվարկն ու գանձումն իրականացնել նախքան այդ լիազորությունների կամ գործողությունների իրականացումը, ելնելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույքաչափերից:

Համապատասխան գործող օրենքների, համայնքի բյուջեում նախատեսել տեղական տուրքերից և վճարներից իրատեսական մուտքեր և ապահովել դրանց գանձումը:

4. Համայնքի աղբահանությունն և սանիտարական մաքրումն իրականացնելիս առաջնորդվել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի և «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով՝ ստեղծել քաղաքապետի կողմից կազմված և համայնքի ավագանու կողմից հաստատված սանիտարական մաքրման սխեմաներ: Ձեռնարկել միջոցառումներ՝ աղբահանության վճարների գծով 2015-2016 թվականներին գոյացած ապառքները համայնքի բյուջե գանձելու ուղղությամբ:

5. Ձեռնարկել համապատասխան միջոցառումներ քաղաքապետարանի շենքում տեղակայված նոտարական գրասենյակին /2 սենյակ/ և համատիրությանը /1 սենյակ/ տրամադրված տարածքների նկատմամբ համապատասխան պայմանագրեր կնքելու ուղղությամբ:

6. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում հաստիքային միավորները և խմբերի խտությունը համապատասխանեցնել ՀՀ կրթության և գիտության նախարարի 26.01.2007թ. թիվ 29-Ն հրամանի պահանջներին:

7. Մանկապարտեզների կողմից գնված սննդամթերքն ընդունել ՀՀ կառավարության 2013թ. 168-Ն որոշման 95-րդ կետի պահանջներին համապատասխան:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ ամբողջական և առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի համապատասխան հաշվետվությունում, որին կարելի է ծանոթանալ Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐ

1. Վերահսկողությունից հաշվեքննության անցումը բարեհաջող հաղթահարելու հարցում ՀՀ վերահսկիչ պալատին իրենց աջակցությունն են ցուցաբերել ՀՀ-ում Եվրոպական Միության (այսուհետ՝ ԵՄ) պատվիրակությունը և «Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը» (այսուհետ՝ ԳՄՀԸ) «Հանրային ֆինանսների կառավարումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում: Մասնավորապես.

- Բարձրագույն վերահսկիչ մարմինների միջազգային կազմակերպության (այսուհետ՝ INTOSAI) ստանդարտների հիման վրա ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն իրականացնելու նպատակով վերապատրաստվել է Վերահսկիչ պալատի թվով 30 աշխատակից: Վերապատրաստված աշխատակիցները փորձագետների ներգրավմամբ INTOSAI ստանդարտներով իրականացրել են ֆինանսական և համապատասխանության պիլոտային աուդիտներ թվով 6 պետական մարմնում:

- Վերահսկիչ պալատի կողմից թվով 6 աշխատակից միջազգային փորձագետի ներգրավմամբ INTOSAI ստանդարտներով իրականացրել է արդյունավետության պիլոտային երկու աուդիտ:

-Վերահսկիչ պալատի թվով 20 աշխատակից վերապատրաստվել է Հայաստանի Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների (APSAS) թեմայով:

-Վերահսկիչ պալատում ձևավորված աշխատանքային խումբը հրավիրված միջազգային փորձագետի մասնակցությամբ իրականացրել է Վերահսկիչ պալատի վերջին տարիների գործունեության INTOSAI ստանդարտներով ինքնագնահատում: Ինքնագնահատման հաշվետվությունն ուղարկվել է INTOSAI միջազգային զարգացման նախաձեռնության գրասենյակ հավաստման նպատակով: Միջազգային հավաստիացում ստանալուց հետո ինքնագնահատման հաշվետվության հիման վրա կմշակվի Զարգացման ռազմավարության նոր հնգամյա ծրագիր:

2. 2016 թվականի ապրիլի 27-ին ք. Ծաղկաձորում տեղի է ունեցել INTOSAI ազգային առանցքային ցուցանիշների հանձնաժողովի 9-րդ նիստը, որին մասնակցում էր 14 երկրի 40 պատվիրակ: Նման բարձր մակարդակի մասնագիտական միջոցառում Հայաստանում անցկացվել է առաջին անգամ: Ազգային առանցքային ցուցանիշների աուդիտն էապես կարող է օգտակար լինել ՀՀ կառավարության համար՝ հատկապես ծրագրային բյուջետավորման գործում: Այն ունի առավելապես կանխարգելիչ նշանակություն:

3. Վերահսկիչ պալատի նախագահի պատվիրակությունը դեկտեմբերի 5-11-ը մասնակցել է Արաբական Միացյալ Էմիրությունների ք.Աբու Դաբիում կայացած INTOSAI 22-րդ համագումարին: Համագումարի ընթացքում ընդունվել է Աբու Դաբիի հռչակագիրը, որով վերահաստատվել է բարձրագույն վերահսկիչ մարմինների անկախության դրույթը: Համագումարի ընթացքում Վերահսկիչ պալատի պատվիրակությունը պաշտոնական երկկողմ հանդիպումներ է ունեցել ԱՄՆ, Իրանի Իսլամական Հանրապետության, մերձբալթյան երկրների պատվիրակությունների հետ: Ձեռք են բերվել համագործակցության նոր պայմանավորվածություններ համատեղ վերահսկողության ծրագրերի և Վերահսկիչ պալատի կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների ուղղությամբ:

4. Ղեկավարվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ ԵԱՏՄ պայմանագիր) 22-րդ հոդվածի և ԵԱՏՄ պայմանագրի 5-րդ հավելվածի Արձանագրության 53-րդ կետի՝ հաշվետու տարում Վերահսկիչ պալատի կողմից ԵԱՏՄ անդամ պետությունների բարձրագույն վերահսկիչ մարմինների հետ իրականացվել է 2 համատեղ վերահսկողական միջոցառում: